

## Հ Ե Ն Բ Ի Կ Ի Բ Ս Ե Ն \*

### XII

Աշուղը և բանաստեղծը.—Իրսէնի երկրորդ ալցելութիւնը նորվէզիայում.  
«Թօսմէրսիոլ» (Քննադատները և Թօսմէրսհօլմին մասին.—Թօսմէրեան ընտանիքը.—Ծէրէկկա Վէստ.—Ալբարդութեան» հանապարհին.—Ծէտէնին  
և նրա վախճանը.—Ծէկոոր Քրօլ.—Ռւլրիկ Երէնդէլ.—Թօսմէրի և Քրօլի  
ընդհարումը.—«Եղնուական մարդիկ»,—Ծէտէնի, մահուան առեղծուածը.  
—Ծէրէկկան մերժում է Թօսմէրի առաջարկը.—Ծէրէկկաւի հոդեկան կերպարանափոխութիւնը. նրա խոստովանութիւնը և սիրոյ գրաւականը.—  
Երէնդէլ իրք «Գինետան հանճար».—Իրսէնի դիրքը գէպի իդէալիզմը).  
—«Ծովի տիկինը» (Հիախասիին բնութիւնը և Ականդինաբեան զրողները.  
—Ելլիդայի և թժշկ Վանդէլի կապը.—«Ծովի տիկինոջ հիանդութիւնը.—  
Օտարականը.—Մի արտեստագէտի պատմութիւնը.—Ելլիդայի խկալան  
դիագնոզը.—Ամուսինների բացատրութիւնը.—Ելլիդայի բժշկութիւնը.—  
Լինզշտրանդ և Հիլդէ),

Իրսէն իր քսանեօթամնայ հասակում գրած մի սիրուն  
բանաստեղծութեան մէջ նկատում է—

—«Աշուղը չունի ոչ տեղ և ոչ տուն,  
Նա սաւառնում է միշտ գէպի հեռուն,  
Զերմ երգատապ մի սրտի համար  
Միակ հայրենիքն է համակ աշխարհ»:

Գուցէ շատերին տարօրինակ թուի, եթէ նկատենք, որ  
այս տեսակ մի «աշուղ» էր նաև հէնց այդ տողերի հեղինակը.  
«Ա էլ «ականջ էր դնում ամենաթաքուն կեանքի զարկերին».  
Նրա երգն էլ «ժողովրդի երազներն էր պարզում, մաքերը լուսաբանում»: Միայն այն տարբերութեամբ, որ նա անից և տեղից գուրկ էր, այլ ակամայ միայն զրկուեց—իր հայրենիքից  
համարեա հալածուած՝ տասնեակ տարիներ օտարութեան մէջ  
էր ապրում:

\*.) Տե՛ս «Մուլճ» № 5.

իբսէն այժմ արդէն առնական լիակատար հասակումն էր —58 տարեկան — և իրըն մնձ դրամատուրգ «Ընդհանուր հայրենիքում» վաղուց էր հիւսել իր փառքի և անժահութեան դափնիները: Սակայն իր հայրենակիցների մի մասի ապերախտութիւնը և զրա հետ կապուած վատրանդի կևանքը այս դափնիների փուշն էր կազմում: Դեռ էլի մի քանի տարի պիտի անցնէր՝ մինչեւ այս փուշը կատարելապէս արմատախիլ լինէր, մինչև հոչակաւոր նորվէդացին ընդ միշտ իր հայրենիք վերադառնար: Մինչեւ այդ բողէն սակայն նա 1885-ի ամառը նորից այցելեց իր հայրենիքը:

Նա ուրախութեամբ նկատում է, որ Նորվէդիայի քաղաքական-հասարակական կեանքը բաւականաչափ կերպարանափոխուել է: Հին, մանր-մուսը կորիւների փոխարէն՝ նա այժմ տեսնում է լուրջ և բանաւոր հիմքերի վրայ կանգնած կուսակցութիւններ, որոնց մաքառման դրօշակը գաղափարի անունով էր պարզուում: Դա այլ ևս չէր մնացել իր երիտասարդ ժամանակուայ Նորվէդիան, որի մասին նա երբեմն կծու կերպով նըկատել էր թէ՝ դա կարծես բնակուած լինի «ոչ թէ երկու միւլօն մարդկանցից, այլ երկու միլիօն չներից և կատուներից» (Emil Reich: «Ibsens Drama»):

Իր հայրենիքի քաղաքական կուսակցութիւնները իբսէն նկարագրել էր թէ «Երիտասարդութեան մլութեան» և թէ մասամբ «Ժողովրդի թշնամու» մէջ: Այս անգամ Նորվէդիայում նոր դրդումներ ստանալով՝ նա դարձեալ վերադառնում է նոյն ինդրին և մի տարուց յետոյ՝ 1886-ին զրում է իր նշանաւոր դրամաներից մէկը — «Ռոսմերշոլմ» («Rosmersholm»), որի մէջ սակայն, ինչպէս շուտով կը տեսնենք, հոգերանական բարդ պրօբլեմները, գէմքերի նուրբ, ճարտարարուեստ բնորոշումը դարձեալ առաջնակարգ տեղ են բռնում և կուսակցական պայշարը երեւան է գալիս միայն իբրեւ աստառ:

«Ռոսմերշոլմ» հետաքրքրական է և մի ուրիշ կողմից: Իրամէնի ոչ մի դրամայի մասին այնքան տարբեր և հակասական կարծիքներ չեն յայտնուել, ինչպէս «Ռոսմերշոլմի» նկատմամբ — Գ. Քրաոդէսի, Եգէրի, Յուլիհառուպտի, Զանզատայնի, Պայխի, Սալօմէսի, Լիցմանի, Լէօ Բէրգի և ուրիշների մեկնութիւնները աւելի կատ նուազ չափով զանազանում են միմիանցից: Ոմանք առարկում են, որ «Ռոսմերշոլմ» մի «հարց է առանց պատասխանի», որ գլխաւոր հերոսի և հերոսսւհու — Ռոսմերի և Բէրէկ-կայի — բօմանատիկական մահոււամբ դրամայի հանգոյցը քայլայւում է, բայց ոչ թէ լուծւում: Մի քանի յայտնի գրողներ մինչև իսկ բացարձակապէս խոստովանում են, որ այս դրաման առ-

հասարակ չեն հասկանում: Էմիլ Բայխը սակայն գրում է թէ՝ յիրաւի ինքն էլ երբեմն չէր հասկանում այդ դրաման, բայց երկար ժամանակ զրանով զրաղուած լինելով՝ այժմ ևկել է այն եղրակացութեան, որ «Ժողովրդի թշնամին», «Վայրի բար» և «Բօսմէրսհօլմ» կազմում են մի եռաբանութիւն (Trilogie) և որ վերջինս պատասխանն է առաջին երկու գրամաներում արձարծուած խնդիրների: Դոկտոր Շտոկմանի իդէալիզմը հանդիպելով «սերտ մեծամասնութեան» ապառաժին՝ թէև հիմնավին չէ խորտակում, բայց այսպէս թէ այնպէս մասամբ անդամահատում է, իսկ Գրէգէրսի իդէալիզմը աւելի նեղ շրջանակում վերին աստիճանի տխուր, ողբերգական մի ճակատադրի է հանդիպում—պատճառ է դառնում մի անմեղ արարածի և վերջիվերջոյ իր սեփական կորստեան: «Բօսմէրսհօլմում» ապակայն շօշափեում է այն խնդիրը թէ ինչ պէտք է լինի ապագայ մարդը—«ուրախ, ազնուական մարդ»—ահա այս ապագայ հերոսի կոչը:

**Անցնենք սակայն գրամային:**

Նախկին պատոր Եօնաննէս Բօսմէր պատկանում է Բօսմէրսհօլմի ամենապատուաւոր գերդաստաններից մէկին, որ մի քանի դար շարունակ փայլում էր իր նախանձելի դիրքով: Երանախորդները «քահանաներ, զինուորականներ, բարձրասահան պաշտօննեաններ» էին, բոլորն էլ պատուաւոր և օրինակելի մարդիկ: Եօնաննէսի հայրը, որ «իր ընտանիքումն էլ մի գեներալ էր», խիստ և պահպանողական ողով էր կրթել իր որդուն: Սակայն Ուլրիկ Բրէնդէլ ազատամիտ իդէալիստը, որին կարճ ժամանակով յանձնուած էր Եօնաննէսի դաստիարակութիւնը, ուժեղ ազգեցութիւն է ունենում իր աշակերտի վրայ: Հայրը նկատելով Բրէնդէլի ուղղութիւնը և նրա «վտանգաւոր հետեւանքները»՝ չուտով հեռացնում է նրան իր տնից: Բայց Եօնաննէսը աւելի Բօսմէրեան ընտանիքի աւանդական ոգին է իւրացնում: Դա երեւում է հէնց նրա նախկին պաշտօնից—պատօրութիւն, որ նա արժանաւոր և անբիծ կերպով էր կատարում: Իսկ այժմ իր կալուածքում առանձնացած՝ իր ընտանիքի ծննդարանութեամբ էր զրաղուած:

Եօնաննէսը և իր կին Բէատէն, որ ազնիւ, փափկասիրտ և զգայուն մի անձնաւորութիւն էր, թէև հոգեկան շատ սերտ ներդաշնակութեամբ չէին կապուած, այնուամենայնիւ ապրում էին խաղաղ կենակցութեամբ, որը սակայն փարագոյրի յետեկց զրդովուելու էր և նոյնիսկ իր ողբերգական զոհը տաղու:

Հիւսիսից՝ ապաստանների և սառնամանիքի հայրենիքիցն էր գալիս այս վրդովեցնող փոթորիկը: Դա Բէրէկկա Վէստ

է—իբսէնի ստեղծած կանացի ամենամշանաւոր տիպերից մէկը:  
Ռէբէկկայի ընդհանուր բնաւորութեան և հոգեկան ան-  
սանձ թոփչըների խորհրդանշանը հէնց իր ծագման պատմու-  
թիւնն է: Բնութեան ազատ զրկում նրա ծնունդն էլ ա-  
զատ է լինում, օրինապահութեան սահմաններից դուրս  
—նրա մայրը մի մանկաբարձունի էր՝ տիկին Գեմվիկ,  
իսկ հայրը մի բժիշկ՝ գոկտօր Վէստ—որ ճանապարհորդելիս  
պատահաբար հանդիպել էր առաջինին: Մօր մահուանից  
յետոյ բժիշկը փոքրիկ Ռէբէկկային իր խնամակալութեան  
տակն է աւնում և կրթում է նրան ազատամիտ հայեացքնե-  
րով, որոնք և իր սեփական դաւանակն էին կազմում, Ռէբէկ-  
կան երբ հաստնանում և գեղեցիկ օրիորդ է դանում, նրա  
խնամակալը չէ քաշում նրա հետ ստեղծել նոյնանման յարա-  
բերութիւնը, ինչ որ նա ունէր Ռէբէկկայի մօր հետ եւ սա  
այնքան էլ դժուար չէր. նախ մտերժացող զոյզի «ազատամու-  
թեան» պատճառով և երկրորդ, որ Ռէբէկկային յայտնի չէր  
իր խորհրդաւոր ծագման պատմութիւնը:

Բժիշկ Վեստը հիւանդանում և տարիներ շարունակ  
տանջւում է. իսկ Ռէբէկկան չը նայելով այս հանգամանքին՝  
անձանձիր համերութեամբ շարունակում է կենակցել նրա  
հետ և հոգատար կերպով խնամել նրան: Բժիշկը շատ ողորմելի  
դրութեան մէջ է մեռնում. այնպէս որ իր աղջկան կամ  
կնոջ թողնում է միայն «զրբերով լի մի արկղ»: Այս տեսակ  
ժառանգութեամբ Ռէբէկկան ի հարկէ անկարող էր ապրել. և  
ահա նա ստիպուած է ուրիշ տեղ փորձել իր բախտը: Նա  
զօրեղ կամքի, լայն հայեացքների և հետևողական բնաւորութեան  
տէր մի օրիորդ էր, այդ պատճառով ուր էլ որ լինէր՝ հաւա-  
նորէն յաջողութիւն էր գտնելու:

Եւ բախտը առաջնորդում է նրան դէպի Ռօսմէրահօլմ:  
Ռէկտօր Քրօն Բէտաէի եղբայրը՝ ծանօթանում է նրա հետ և  
ի նկատի ունենալով իր քրոջ հիւանդութիւնը՝ առաջարկում է  
նրան մտնել Ռօսմէրի տունը իբրև նրա կնոջ օգնական: Ռէբէկկան  
շատ լաւ ընդունելութիւն է զտնում Բէտաէից և առհասարակ  
Ռօսմէրի տանը իրան զզում է իբրև «ընտանիքի անդամ»:  
Հիւանդ և նրբազզած Բէտաէն դէպի Ռէբէկկան տածում էր  
նոյնիսկ «սիրահարութեան նմանուող մի զգացմունք»:

Ռէբէկկան մի յայտնի դիտաւորութեամբ էր մուտք գոր-  
ծել Ռօսմէրի տունը: Նա վճռել էր գրաւել և ամբողջովին  
տիրապետել այս բարեմիտ և խստաբարոյ պատօրին: Իր  
«ազատամիտ» ծնողների զգայական յատկութիւնները անշուշտ  
ժառանգաբար արմատացել էին և նրա մէջ: Վայրագ, անզուսպ

կիրքն էր, որ նրան մղում էր դէպի պաստօրի տունը, և նա առանց միջոցների խտրութեան՝ վճռել էր անպայման ձեռք բերել այս հազուափիւտ որսը Նա իր մէջ զգում էր ևմի ահարկու փոթորիկ—նման այն վոտթորիկներին, որոնք ձմեռը տեղի են ունենում հիւսիսում—որ երբ տիրապետում է մէկին՝ քաշ է տալիս իր հետ անդիմազբելի կերպով»:

Բայց ինչպէս ձեռք գցել Եօհաննէսին, առաջին նա ամուսնացած էր, երկրորդ նախկին հոգեորական և իրքե՛ Ռօսմէրեան գերդասաանի շառաւիդ՝ խիստ բարոյականի և պահպանողական ոգու տէր մի անձնաւորութիւն։ Այս բոլորն ի նկատի ունենալով՝ խորամանկ Ռէբէկկան շատ նուրբ և սիստեմատիկ կերպով է առաջ գնում—նա վճռում է զեռ Ռօսմէրին ազատամիտ հայեացքներ ներշնչել յետոյ իբրև հետեանք այս հանգամանքի, նրա և Բէտտէի յարաբերութիւնները սառեցնել—որովհետև Բէտտէն պահպանողական էր և ջերմ հաւատացող—և վնրջ իվերջոյ այս խեղճ կնոջ գոյութեանը առանարակ վերջ տալ:

Եւ Ռէբէկկան համարեա լիովին համնում է իր նպատակին Ռօսմէրը շատ թոյլ և ենթարկուող բնաւորութիւն ունէր, հետեւաբար Ռէբէկկայի ուժեղ կամքի առաջ մի ձկուն և դիւրաթեք զործիք կարող էր դառնալ։ Այս զօրեղ կնոջ ներշնչմամբ նա շուտով ազատամիտ հայեացքներ է ձեռք բերում։

Առաջին քայլն արդէն արուած էր. մնում էր երկրորդը և վճռողականը, որ անհամեմատ աւելի դժուար էր, բայց Ռէբէկկայի նման մի անձնաւորութեան համար ոչ անիրագործելի, վերջինս հեռատես նպատակաւորութեամբ գեռ վաստակում է Բէտտէի համակրանքն ու վստահութիւնը և այնքան առաջ է գնում, որ նրա անզաւակ լինելը մատնացոյց է անում իբրև հակաամուսնական մի երեսյթ և ներքին անհամերաշխութեան մի նշան։ Միամիտ կինը հաւատում է սրան և մանաւանդ բնազդօրէն նկատելով Ռէբէկկայի հեռաւոր դիտաւորութիւնը, թէ հոգեպէս և թէ Փիզիկապէս աւելի է տանջւում։ Անբախտ կնոջ յուսահատութիւնը և նեարգերի քայլացումը այն աստիճանի է համանում, որ նա վերջ իվերջոյ իրան ձգում է իրանց տան հանդիպական ջրազացի առուակը և իեղգւում է։

Ռօսմէրը, որ դեռ ոչ մի տեղեկութիւն չունէր ոչ Ռէբէկկայի դէպի ինքը տածած կրթի և ոչ էլ իր կնոջ ողբերգական մահուան բուն պատճառի մասին, այն կարծիքի էր—ինչպէս և նրա հետ շատերը—որ Բէտտէի այս ողբալի վախճանի պատճառը ինելազարութիւնն էր։

Այս բոլոր դէպքերը դրամայի առաջին գործողութիւնը

գեռ չը սկսուած արդէն տեղի են ունեցել, երբ վարագոյրը բացւում է թէատէն այլևս չը կայ: Եւ Ծէրէկկան այս ծանր ոճագործութիւննից յետոյ գեռ չէ հանգստացել—լիակատար յաջողութեան համար նա ցանկանում էր թէատէի յիշատակը առհասարակ ջնջել Ռօսմէրի սրտից: Վերջինս ամեն անգամ գուրսը Մջելիս՝ երբեք չէր վստահանում ջրաղացի նեղ ճանապարհով բարձրանալ դէպի կամուրջը, որտեղից յած էր ընկել թէատէն—այլ զարտուղի ճանապարհներով էր զնում: Եւ Ծէրէկկան անհանդիստ և լարուած կերպով պատուհաննից շարունակ հետեւում էր նրա ճանապարհին, որ, ի մեծ ցաւ իր, միշտ զարտուղի էր—«Այսօր էլ նա չուռ նկատ, բարձրից է զնում... Այստեղ, Ռօսմէրսհօլմում, ինչպէս երեսում է, հանգուցեաներին երկար են յիշում»—«Օրինորդ», նկատում է տիկին Հէլզէթը՝ Ռօսմէրի տնտեսուհին, «Ես կարծում եմ, որ աւելի չուտ հանգուցեաներն են, որ անբաժան են Ռօսմէրսհօլմից»: Եւ այս անբաժան լինելու սիմբոլը «սպիտակ ձին եւ, որ գիշերները երբեմն երեւում է Ռօսմէրսհօլմում:

Ինչպէս Ռօսմէրը այնպէս էլ բէկտօր Քրօլը, որ Ծէրէկկային առաջնորդել էր դէպի պաստորի տունը, միամիտ էր և գործից անտեղեակի: Իր քրոջ մահուանից յետոյ նա երկար ժամանակ չէր այցելում իր փեսային, որպէսզի «ղժբախտ տարիների յիշողութիւնը» չը զարթեցնի նրա մէջ: Նա այնքան միամիտ է, որ առաջին այցելութեան ժամանակ հանդիստ կերպով նկատում է Ծէրէկկային թէ՝ նա այժմ կարող է «թէատէի թողած դատարկ տեղը՝ գրաւելու»:

—«Ես ունեմ արդէն այն տեղը, ինչ որ ինձ ցանկալի է, պարզն բէկտօր»—պատախանում է Ծէրէկկան:

—«Գործունէութիւնը—այս, բայց...»

—«Ամօթ է, բէկտօր Քրօլ, ինչպէս կարող էք այսպիսի լուրջ լինդիրների վրայ կատակներ անել»—ծանր և վճռողական շնչտով վրայ է բերում Ծէրէկկան:

Բայց բէկտօր Քրօլը ուրիշ կարեւոր ինդրով էր նկել իր փեսայի մօտ. իր սեփական խոստովանութեամբ, նա իր ծերութեան օրերում դարձել էր «քաղաքական ազիտատօր»: Նա թէն շատ յետադէմ և պահպանողական հայեացքների տէր էր, բայց կամքով ուժեղ, միանգամայն անշեղ և համոզմունիքի մարդ էր: Նկատելով արմատականների և նրանց օրգանի—«Լուսաշտարակի»—յառաջադիմութիւնը՝ նա զնուել էր միացնել բոլոր պահպանողական տարրերը և նոյնիսկ նոր ոյժեր առաջացնել՝ հակառակորդների դէմ մաքառելու համար: Նա ալիս հակուած չէր միայն «անտարբեր հանդիսատեսի» դեր կատարել. նա անկարող

էր հաշտուել ազատամիսների ուժեղ և հետզինեաէ ամրացող դիրքի հետ Նրան շատ ծանր և անախորժ էր թւում մանաւանդ այն հանգամանքը, որ պըմբոստութեան ոգին» իր ստուերը տարածել էր նոյն իսկ իր սեփական ընտանիկան յարկում և այն ուսումնարանում, որ իր խնամքին էր յանձնուած—Նրա որդին դպրոցում աշակերտական անկարգութեան պարագլուի ին էր, իսկ աղջիկը մի կարմիր թղթապանակ էր հիւսել «Լուսաշարակը» ծրարելու համար; Թէկտօրի կինն անգամ «հակուած էր գէպի իր երեխաները»:

—«Այս, սիրելի Ռօսմէր, այս վտանգաւոր և ապականուած ժամանակի ոգու դէմ ևս պէտք է կռուեմ ամեն տեսակ զէնքով... թէ խօսքով և թէ գրչով»:

—«Բայց յոյս ունեն գու այդ եղանակով որ և է հետեւանքի համանել»—հարցնում է Ռօսմէր:

—«Ես կամնում եմ յամենայն դէպս իմ քաղաքացիական պարտականութիւնը կատարել և կարծեմ ամեն մի հայրենասէր և բարեմիտ մարդու պարտքն է նոյնը անել; Տեսնում ես. այս երեկոյ ևս գլխաւորապէս հէնց սրա համար եմ եկել քեզ մօտ»:

—«Բայց թանկագին բարեկամ, ինչ ևս ասում, ևս ինչ պէտք է...

—«Դու պէտք է քո հին բարեկամին օգնես, և անես այն, ինչ որ ուրիշներն են անում...»:

—«Բայց, թէկտօր Քրօլ, դուք գիտէք, որ պարոն Ռօսմէրը այնքան էլ չէ ախորժում այդ տեսակ գործերից»—նկատում է թէքէկկան:

—«Ես այժմ այլես այդ տեսակ անախորժութիւն չը պէտք է զգայ, Ռօսմէր, դու բաւականաչափ չես հետեւում անցքերին. զու նատել ես այստեղ և պարփակուել միայն քո պատմական ժողովածուներով.., Բայց ժամանակը զժբախտաբար չէ յարմարում այդ տեսակ պարապմուներին; Դու չես կարող երեւակայել թէ ինչ դրութեան է հասել մեր ամբողջ հայրենիքը. համարեա ամեն մի գաղափար գլխադարձ է եղել; Հսկայական աշխատանք է հարկաւոր բոլոր այս մոլորութիւնները արմատախիլ անելու»:

—«Ես էլ եմ այդպէս կարծում: բայց այդ տեսակ աշխատանք ինձ ամենեւին չէ յարմարում»:

—«Բայց զրանից ինձ թւում է, թէ պարոն Ռօսմէրը այժմ այն տեղն է հասել, որ կեանքի երեւոյթների վրայ աւելի բաց աչքերով է նայում քան թէ առաջ—ինքնավստահ և խորհրդաւոր կերպով նկատում է թէքէկկան»:

—«Աւելի բաց աչքերով»—յանկարծակիի եկած վրայ է բերում թէկոր Քրօլը:

—«Այն, կամ աւելի ազատ, աւելի անաշառ»—պատասխանում է թէրէկիկան:

—«Այս ինչ է նշանակում, Ռօսմէր, դու երբէք չես կարող այնքան կարծամիտ լինել և խարուել մի այնպիսի պատահականութիւնից, ինչպիսին խռովարարների ժամանակաւոր յաղթութիւնն է»:

—«Ոիրելի բարեկամ, դու գիտես արդէն, որ ես քաղաքականութիւնից քիչ բան եմ հասկանում. բայց յիրաւի ես նըկատում եմ, որ վերջին տարիներում անհատի մտածողութիւնը աւելի ինքնուրոյն է գառնում»:

—«Ես առանց այլմայլութեան դու այդ համարում ես մի լաւ երեւոյթ. բայց շատ սխալուում ես, բարեկամու Նայիր շուրջու, թէ դուրս և թէ քաղաքում, և կը տեսնես թէ ինչ կարծիքներ են տիրում արմատականների շրջանում: Դրանք ամենեւին չեն տարբերուում այն իմաստութիւնից, որի յայտարարն է «Լուսաշտարակը»»:

—«Այն, Մօրտէնսգօրդը («Լուսաշտարակի» խմբագիրը) այս կողմէրում շատերի վրայ մեծ ազդեցութիւն ունի»—նկատում է թէրէկիկան:

—«Ի՞նչպէս կարող էք այդպիսի բաներ երեւակայել, Մի մարդ այնպիսի կեղտոտ մի անցեալով, մի մարդ, որ անբարոյական մի արարքի պատճառով իր ուսուցչական պաշտօնից հեռացուած է—ահա այդպիսին այժմ ասպարէղ է դուրս գալիս իրեն ժողովրդի ղեկավարած»:

—«Ես շատ զարմանում եմ, որ դուք ե ձեր բարեկամները չեք դուրս գալիս նրա դէմ»—հեղնօրէն նկատում է թէրէկիկան:

—Հենց այդ է, որ մենք այժմ ուզում ենք անել, Այսօր մինք գնեցինք «Պաշտօնական թերթը», Փողային հարցը ոչ մի դժուարութիւն չը պատճառեց. բայց (դառնում է զէպի Ռօսմէր)՝ ես այժմ արդէն իմ իսկական ինպիրքին եմ մօտենում—զեկավարութիւնը, լրագրական զեկավարութիւնն է, որ մեծ բարդութիւններ է առաջացնում: Ասա ինձ, Ռօսմէր, բարի դործի համար դու յանձն չես առնի արդեօք այդ թերթի խըմբագրութիւնը»:

—«Ե՞ս»—համարեա սարսափած նկատում է Ռօսմէր:

—«Ի՞նչպէս կարող էք այդպիսի բան ձեր մտքովն անդամ անցկացնել»—լրացնում է թէրէկիկան:

—«Որ դու բեղ հեռու ես պահում հրապարակական ժո-

զրկերից և չես կամենում վայելել այն քաղցրութիսների տառափը, որ տեղալու է քո գլուխդ—այդ ի հարկէ շատ խելօք բան է։ Բայց խմբագրական հանգիստ գործունէութիւնը կամ աւելի ճիշտ ասած...»։

—«Ոչ, ոչ, սիրելի բարեկամ, այդ չը պէտք է դու ինձանից պահանջես»։

Երբ այսպէս Ռօսմէրը մի անգամ ընդ միշտ հրաժարւում է Քրօլի առաջարկն ընդունելուց—այն ժամանակ վերջինս նկատում է—

—«Յամենայն դէպս դու կը չնորհես մեղ քո անունը»։

—«Իմ անունը»։

—«Եյս, Եօհաննէս Ռօսմէր անունն ըստինքեան արդէն մի մեծ առաւելութիւն է՝ մեր թերթի համար։ Մենք բոլորս որոշ կուսակցութեան մարդիկ ենք—ինչպէս լսում եմ ես ինքս համարւում եմ մինչեւ իսկ շատ մոլեռանդ։ Այս պատճառով մեր անուան հետ կապուած թերթը մոլորուած ամրոխի շրջաններում չէ կարող յաջողութիւն ունենալ։ Իսկ դու կուսակցական պայքարից քեզ միշտ հեռու ես պահիլ։ Քո խաղաղ և արդարասէր ողին, քո նուրբ մտածողութիւնը, քո անձեռնմխելի պատիւը—այս բոլորը արդէն շատերին է յայտնի և շատերից գնահատուած։ Բայց դրանից այն յարգանքը և պատկառանքը, որ դու քո քահանայական պաշտօնավարութեան ժամանակ վայելում էիր, և վերջապէս քո ընտանեկան անուան պատկառելութիւնը»։

Այս խօսակցութեան ժամանակ յանկարծ ներս է մտնում Ռելրիկ Յրէնդէլ, Ռօսմէրի նախկին ուսուցիչը։ Բաւական լաւ արտաքինով, բայց հնամաշ շորեր հագած մի ծերունի է նա և իր բնաւորութեամբ, ինչպէս յետոյ կը տեսնենք, Գրէզէրսի և Հիալմարի («Վայրի բագը») մի խառնուրդը։ Նա էլ ազատութեան և ճշմարտութեան երկրպագուներիցն էր, մի իդէալիստ, որ սիրում էր իր առանձնութեան մէջ յղիանալ։ Սակայն նա այժմ գտնուում էր կեանքի մի փոխանցիկ շրջանում։ — «Ես կամենում եմ մտնել կեանքը, աչքի ընկնել, գործ կատարել։ Փոթորկալից ժամանակներում ենք ապրում—այժմ ես էլ մտագիր եմ ազատութեան սեղանի վրայ դնել իմ լուրման»։

Այս նպատակով նա կամենում էր հրապարակական մի ժողով կազմել և դրա համար այժմ եկել էր Ռօսմէրի օժանդակութիւնը ինդրելու։ Վերջինս օգնում է իր նախկին ուսուցչին թէ փողով և թէ վայելուչ զգեստներով։ Իսկ Ռէբէկիան, առանց Ռօսմէրի գիտութեան, նոյնիսկ մի յանձնարարական է աալիս նրան Մօրտէնսգորդի անունով։

ԲԵկտօր Քրօլ, որ սկզբից արգեն շատ անհամբերող դիրք էր բռնել գէպի «կորած Բրէնդէլ» և իր զարմանքն էր յայտնում, որ Ռօսմէրը այս տեսակ մի մարդու առաջ առհասարակ բաց է անում իր դռները—խորհրդաւոր կերպով հարցնում է Բրէնդէլին.

—«Դուք Յլ էք կամենում...»:

Իսկ միամիտ Բրէնդէլ այս խօսքերի յետին միտքը չը հասկանալով՝ դիմում է ներկայ եղողներին.

—«Այստեղի հասարակութիւնը իմ տարածուած գրուածքների մասին ճիշտ տեղեկութիւն ունի»:

—«Ո՞չ, ես պէտք է անկեղծ խոստովանեմ, որ...»—պատասխանում է Քրօլ:

—«Ես ձեր գրուածքներից շատերը կարգացել եմ, որովհետեւ իմ խնամակալ հայրը ունէր այդ բոլորը»—վրայ է բերում Բրէկկան:

—«Ազնիւ տանտիլին, դրանով ձեր ժամանակն իդուր էք վատնել. այդ բոլորը ողորմելի բաներ են, ասում եմ ձեզ»—նկատում է Բրէնդէլ:

—«Այդպէս»—զարմացած հարցնում է Բրէկկան:

—«Ի՞նչ որ դուք կարգացել էք—այն իմ ամենալաւ երկերը չեն ճանաչում ոչ մի մարդ և ոչ մի կին—ոչ ոք՝ բայի ինձանից»:

—«Դա ինչպէս կարող է պատահել»—հարցնում է Բրէկկան:

—«Որովհետեւ դրանք գրուած չեն»:

—«Բայց սիրելի պ. Բրէնդէլ...»—վրայ է բերում Ռօսմէր:

—«Դու գիտես, Եօհաննէս, որ ես մի տեսակ թուլամորթ եմ. մի Gourmand, և ամբողջ կեանքումս այսպէս եմ եղել. Ես սիրում եմ առանձնութեան չույսութիւնը, որովհետեւ ես սրանով կրիմակի եմ յղփանում, տամ անգամ աւելի. Երբ ես պաշրում եմ ոսկէ երազներով, երբ նոր, օրօրուող, արագաթոիչ մաքեր են ծնւռում իմ մէջ և զօրեղ թիերով ինձ կաշկանդում—այն ժամանակ այդ բոլորը ես ձևակերպում եմ բանաստեղծութեամբ, տեսիլներով, պատկերներով—այսպէս մեծ ուրուագծերով, հասկանում ես»:

—«Այն, այն»—մրմիջում է Ռօսմէր:

—«Ո՞՛, ես ինչպէս ճաշակել, յղփացել եմ. կերպարանաւորելու խորհրդաւոր երանութիւնը—այսպէս մեծ ուրուագծերով, ինչպէս նկատեցի—ծափահարութիւնը, չնորհակալութիւնը, հըռչակը, դափնեայ պսակը—այս բոլորը ես լիուլի և խանդագառ կերպով եմ վայելել. Գաղտնի մտապատկերներիս մէջ ինձ այն-

պիսի ուրախութեամբ եմ յագուրդ տուել, այնպիսի մեծ ուրախութեամբ...»

—«Հը՞ մ»—խորհրդաւոր հեղնութեամբ արտասանում է բէկտօր Քրօլ:

—«Եւ այդ բոլորը երբէք չեք դրել»—հարցնում է Բօսմէր:

—«Գրելու այս տափակ, գոհինիկ արուեստը շարունակ մի զգուելի անախորժութիւն է պատճառել ինձ, եւ ինչու պէտք է իմ սեփական իդէալները որբապղծէի՝ քանի որ ես դրանք անբիծ և միայնակ կարող էի վայելել: Բայց այդ բոլորը պէտք է զոհուի: Ճշմարիտ, ես համարեա նոյն վիճակումն եմ, ինչպէս մի մայր, որ իր մատաղ աղջիկներին փեսաների զիրին է յանձնում: Այնուամենայնիւ ես զրանք զոհում եմ, ազատութեան սեղանի վրայ եմ զոհում—մի շարք լաւ ձեակերպուած դասախոսութիւններ՝ ամբողջ հայրենիքում»:

Երբ Ռւլրիկ Բրէնդէլը Բօսմէրից բաւականութիւն ստացած՝ գուրս է գալիս—բէկտօր Քրօլը չէ զլանում դարձեալ նրան խայթել—«Ռողորմած Աստուած, այս էր Ռւլրիկ Բրէնդէլը, որի մասին երբեմն այն կարծիքն էր տիրում՝ թէ նա մեծ-մեծ գործեր է կատարելու այս աշխարհում»:

—«Յամենայն դէպս նա համարձակութիւն ունի ապրել այնպէս՝ ինչպէս իր սեփական խելքն է իրան թելազրում: Ինձ թւում է, որ նա այնքան էլ հասարակ մի բան չէ»—Նկատում է Բօսմէր:

—«Ի՞նչ: Այդպիսի մի կեանք, ինչպիսին նրանն է: Ես կարծում եմ, որ նա հէնց այն մարդն է, որ քո գաղափարները նորից խանսաշփոթէ»:

—«Ո՛, ոչ, ես արդէն ամեն կողմից ինձ ճանաչել եմ... իմ ներքին աշխարհով ես այժմ մի նոր ամառ եմ վայելում, մի նոր երիտասարդական հայեացք, և ահա այդ պատճառով այժմ կանգնած եմ այնտեղ...»:

—«Ո՛ւր, ուր ես կանդնած»—հարցնում է անհամբեր Քրօլը:

—«Այնտեղ, ուր քո որդիներն են կանգնած»:

—«Դու, դու, բայց դա անհնար է... Հերձուածնդ, Եօհաննէս Բօսմէր ուրացնդա»:

—«Ես որքան ուրախ, որքան բաղդաւոր կը զզայի ինձ եթէ լինէի այն, ինչ որ դու ուրացնդ ես անուանում, բայց և այնպէս ես որքան տանջուել եմ...»:

Սակայն ինչ էր այս «ուրացնդի» նպատակը—«աղատութեան գործին» մասնակից լինել—«Ես չեմ միանայ այն հոսանքին, որ տիրում է այստեղ, չեմ մասնակցի կոռւող կուսակցութիւններից ոչ մէկին: Ես պէտք է փորձեմ ամեն կողմից մար-

դիկ հաւաքել—այնքան որքան կարող եմ ես կամենում եմ ապրել և իմ բոլոր կեանքիս ուժերը մի բանի նուիրել—իսկական ժողովրդական միտք առաջացնել հայրենիքում»:

—«Ուրեմն դու կարծում ես, որ զյութիւն ունեցող ժողովրդական միտքը բաւական չէ: Իսկ թւում է սակայն, որ մենք բոլորս մի այնպիսի ճանապարհի վրայ ենք գտնուում, որ միանգամայն տղամաթաթախ է և ուր հասարակ մարդը միայն կարող է իրան երջանիկ զդար»:

—«Ահա հէնց այդ պատճառով ես առաջազրում եմ ժողովրդական մորի խակական նպատակը»:

—«Ի՞նչ նպատակ»:

—«Հայրենիքի բոլոր մարդկանց ազնուական մարդիկ դարձնել»:

—«Բոլոր մարդկանց»:

—«Յամենայն գէպս այնքան շատ որքան հնարաւոր է»:

—«Ի՞նչ միջոյով»:

—«Երանով, որ ես նրանց միտքը, ոզին ազատ կը դարձնեմ և կամքը կազմուացնեմ»:

—«Դու մի երազող ես, Ռօսմէր: Դու ես կամենում նրանց ազատել, ողու ես կամենում—նրանց ազնուացնել»:

—«Ո՛չ, թանկագին բարեկամ, ես ուզում եմ միայն փորձել, այդ տրամադրութեամբ նրանց զինել. իսկ գործողները իրանք պէտք է լինեն»:

—«Եւ կարծում ես թէ նրանք կարող են»:

—«Այն»:

—«Ուրեմն սեփական ուժով»:

—«Այն, հէնց սեփական կարողութեամբ. սոանից դուրս ուրիշ ոյժ գոյութիւն չունի»:

—«Սա նշանակում է խօսել այնպէս՝ ինչպէս մի հոգեռականի է վայել»:

—«Ես այլ ես հոգեռական չեմ»:

—«Այն, բայց—քո մանկական հաւաքը»:

—«Դա այլ ես գոյութիւն չունի»:

Թէրէկլան, որ կողքի սենեակից լսել էր երկու բարեկամների խօսակցութիւնը՝ ներս է մտնում և ինքնագոհ ոճով նկատում է—«Այսպէս, վերջապէս այժմ նա իր զոհաբերութեան մեծ տօնի ճանապարհին է»:

—«Մենք քեզ չենք թողնի, Ռօսմէր, մենք քեզ յետ կը-դարձնենք մոլ մօտ—ասում է շփոթուած Քրօլը»:

—«Ալդեն ես այլ ես երբէք չեմ վերադառնայ»—վճռական կերպով նկատում է Ռօսմէր:

—«Դեռ այդ կը տեսնենք—դու այն մարդը չես, որ կարողանաս մենակ մնալ»:

—«Ես բոլորովին մենակ չեմ լինի: Միայնակութիւնը կրելու համար՝ մենք երկու ենք»:

—«Ա՛, դեռ այս էլ: Բէտէի խօսքերը...»—խորհրդաւոր կամածով վրայ է բերում Քրօլը և յուսահատ ու կոտրուած սրտով հեռանում է իւր նախկին մտերիմ բարեկամից:

Թօսմէրի և Քրօլի այս ընդհարումից յետոյ արդէն տեղի է ունենում—կամ աւելի ճիշտ ասած՝ բացում է—խոկական դրաման, որի համառօտ պասմութիւնը մենք զերս առաջ բերինք, Բէկտօր Քրօլը այժմ է միայն հասկանում «Բէտէի խօսքերը» և ի նկատի ունենալով Թօսմէրի «աղատամտութիւնը»՝ այլ ևս երբէք չէ կասկածում նրանց ճշմարտութեանը: Նա յայտնապէս նկատում է Թօսմէրին թէ՝ «այստեղ, տանդ մէջ կայ մէջ կը, որ քո յետեց խաղեր է խաղում»—և չէ հրաժարում հաստատել, որ այդ «մէկը» Բէրէկկան է:

Բայց Քրօլը աւելի է առաջ գնում:

—«Ասա ինձ, դու ինչն ես համարում Բէտէի մահուան հիմնաւոր պատճառը»: Եւ երբ միամիտ Թօսմէրը պատասխանում է—«անկասկած նրա խելագարութիւնը»—այն ժամանակ Քրօլը ահա թէ ինչ է յայտնում—«մի քանի յամենայն գէպս կարող եմ քեզ պատմել. այդ այն է, որ խեղճ, վշտատանջ և չափազանց յուղուած Բէտէն վերջ տուեց իւր կեսանքին նրա համար, որ դու բաղդաւոր, աղատ և քո ցանկութեանդ համեմատ ապրես»:

—«Ի՞նչ ես ուզում դրանով ասել»:

—«Իր կեսանքի վերջին տարում նա երկու անգամ եկաւ քաղաք՝ ինձ մօտ իր երկիւղը և յուսահատութիւնը ինձ յայտնելու»:

—«Այս նոյն խնդրի մասին»:

—«Ոչ, առաջին անգամ նա յայտնեց, որ դու ուրացութեան ձանապահի վրայ ես կանգնած, որ դու կամենում ես քո հայրերիդ հաւատաքին հրաժեշտ տալ... Եւ այսուհետեւ երբ ես փորձում էի նրա տիսուր մաքերը փարատել, ահա թէ նա ինչ ասաց—«Ես այլ ես շատ ժամանակ չունեմ, որովհետեւ եօհաննէսը այժմ պէտք է շուտով ամուսնանայ Բէրէկկայի հետ»:

—«Այդ ինչ ես ասում. Ես, ամուսնանալ...»—շուարած վրայ է բերում Թօսմէրը:

—«Սա հինգաբթի օրն էր, կէսօրից յետոյ. շաբաթ օր երեկոյեան նա իրան կամուրջից ցած ձգեց»:

Պարզ է, որ այս յայտնագործութիւնը մի սոսկալի անա-

կըսկալ էր Ռօսմէրի համար; Նրան շատ ծանր էին թւում մասնաւանդ Քրօլի հետեւեալ խօսքերը—«Զրաղացի առուակի հանելուկը պէտք է քո խղճով լուծես—ի հարկէ, եթէ միայն սրանից մի կտօր մնացել է մէջդ»:

Ռօսմէրը իրաւացի կերպով Քրօլի ուշադրութիւնը դարձնում է մի այլ հանգամանքի վրայ:

—«Լսիր ինձ այժմ. Բէտէի մահուանից յետոյ երկար ժամանակ է, որ Ռէբէկիա վէսար և ես միայնակ ապրում ենք այստեղ՝ Ռօսմէրսոնմում: Այս ամբողջ ժամանակուայ ընթացքում Բէտէի ամբաստանութիւնը քեզ յայտնի էր. բայց ես երբէք չեմ նկատել, որ դու որ և է կասկածի նշոյլ ցոյց տայիր գէպի մեր այս կենակցութիւնը»:

—«Ես միայն երէկ երեկոյեան իմացայ, որ այս կենակցողներից մէկը ուրացող է, իսկ միւսը մի ազատամիտ կին»:

—«Ա՛, ուրեմն դու չես կարող հաւատալ, որ ուրացող և ազատամիտ մարդիկն էլ կարող են մաքրութեան զգացմունք ունենալ: Դու չես հաւատում, որ նրանք բարոյականութեան զգացմունքը կրում են իրանց մէջ իբրև մի բնազդ»:

—«Ես ոչ մի նշանակութիւն չեմ կարող տալ այն բարոյականութեանը, որի արմատները կրօնական հաւատքից դուրս են»:

Բէկոր Քրօլի արած յայտնագործութիւնների վրայ մի առանձին լոյս է սփռում նաեւ Մօրտէնսգօրդի այն տեղեկութիւնը, որ նա իր առաջին այցելութեան ժամանակ հաղորդում է Ռօսմէրին: Մօրտէնսգօրդը յայտնում է, թէ մէկ և կէս տարի առաջ մի նամակ է ստացել Բէտէից, մի «զարմանալի» նամակ, որ «սկսում է մօտաւորապէս սրանով թէ» նա մեծ սարսափի և տանջանքի մէջ է ապրում, որովհետեւ, գրում է, շատ վատ մարդիկ կան մեր կողմեր, որոնք մտածում են միայն ձեզ զայրոյթ և վաս պատճառելու».

—«Ի՞նձ»—հարցնում է Ռօսմէր:

—«Այո, հէնց այդպէս է նամակում: Եւ յետոյ գալիս է ամենատարօրինակը, ասեմ, պարոն պաստօր»:

—«Այո, ի հարկէ, ամեն ինչ, առանց վերապահութեան»:

—«Հանգուցեալ տիկինը խնդրում և աղաչում է ինձ մեծահոգի լինել. իրան յայտնի է, գրում է նա, որ պարօն պատօրն էր ինձ պաշտօնից դրկողը, եւ ինդրում է սրաագին, որ ես վրէմինդիր չը լինեմ»:

—«Ի՞նչպէս կարող էր նա կարծել թէ՝ դուք վրէմինդիր կը լինէք»:

—«Նամակում յիշւում է նաև, եթէ ես զանազան լուրեր

լսեմ Ռօսմէրսհոլմում տիրող յանցաւոր գործերի մասին—դրանց ոչ մի հաւատք չընծայեմ, որովհետեւ վատ մարդիկն են առածում այդ բոլորը՝ ձեզ անբախտացնելու համար»:

—«Այդ բոլորը նամակումն է»:

—«Պարոն պաստօր, դուք այդ կարող եք ժամանակին կարդալ»:

—«Բայց ես չեմ կարող երեւակայել, ի՞նչ էր կարծում նա, ինչ էր վատ լուրերի նպաստակը»:

«Առաջին, որ պարոն պաստօրը իր երեխայական հաւատքից հեռացել է, աս տիկինը որոշակի հերքում էր այն ժամանակ: Եւ յետոյ, հըմ...»:

—«Յետոյ»:

—«Յետոյ զրում է—և աս բաւական խառնիխուռն է—որ ինքը Ռօսմէրսհոլմում ոչ մի յանցաւոր յարաբերութեան մասին տեղեկութիւն չունի, որ իր գէմ երբէք մի անարդարութիւն չէ գործուած: Եւ եթէ այս տեսակ լուրեր պատուին, ինդում է ինձ այս մասին վկասաշատարակումն ոչինչ չը հալորդել»:

Այս անուանարկութիւնները մի կողմից՝ և Բէատէի անսահման բարութիւնը, մեծահոգի ներողամատութիւնը և անյիշաչարութիւնը միւս կողմից—հասկանալի է թէ ինչքան պիտի յուզէին գժբախտ Ռօսմէրին: Նա, որ Բէրէկկայի օգնութեանը «այժմ աւելի կարօտ էր քան թէ երբ և իցէ»—ահա թէ ինչ է նկատում—

—«Ես կարծում էի արդէն, որ մեր սիրուն, մաքուր բարեկամական յարաբերութիւնը մի օր կարող էր արատաւորուել և կամկածի ենթարկուել: Բայց ոչ Քրօլից. Նրա մասին երբէք չէի կարող մտածել: Սակայն մեծ ամրոխը իր կոպիտ զգացումներով և անազնիւ աչքերով...»:

—«Ինչո՞ւ ուրիշների կարծիքին նշանակութիւն տալ. չէ որ մենք ինքներս գիտենք, որ մենք անմեղ ենք»:

—Ես, անմեղ—այն, արդարեւ ես այդ կարծում էի—միայն մինչեւ այսօր: Իսկ այժմ—այժմ, Բէրէկկայի...»:

—«Այն, և այժմ»:

—«Ի՞նչպէս պէտք է բացատրեմ Բէատէիի սոսկալի բողոքը»:

—«Օ՛, Բէատէի մասին մի խօսիր. այլ ես մի մտածիր Բէատէի մասին: Հազիւ վերջապէս դու նրա մահը մոռացել էիր»:

—«Երբ ես այդ բոլորի մասին տեղեկացայ—այն ժամանակուանից նա ահարկու կերպով կենդանացել է նորից»:

Նա կամենում էր իր գժբախտ կնոջ խելագարութեան պատ-

ճառը գտնել—«Ես ուրիշ կերպ չեմ կարող, Բէրէկկաւ ես այս մաշող կառկածից չեմ կարող աղատուել՝ ինչքան էլ որ ցանկանամ»:

—«Բայց այս ծանր խնդրի մասին շարունակ մտածելը կարող է վասնդաւոր դառնալ»—սառնասիրտ կերպով նկատում է Բէրէկկան:

—«Ես որեէ կերպ ինձ մատնած պէտք է լինեմ Նա անշուշտ նկատած կը լինի թէ՝ ես ինչպէս բախտաւոր զարձայ այն օրից, երբ դու մեզ մօտ եկար... Նա նկատած կը լինի որ մենք մինչնոյն գրքերն էինք կարդում. որ մենք միշտ միասին էինք և նոր բաների մասին էինք խօսում: Բայց ես չեմ կարող հասկանալ, որովհետեւ շատ հոգատար էի նրան ինայելու... Եւ այնուամենայնիւ—օ, սարսափելի է այս մասին մտածել—իր հիւանդ սիրոյ մէջ նա անդադար լոել է ու լոել. մեզ դիտել է, ամեն ինչ նկատել և յոռի մտքով է մեկնաբանել»:

—«Օ՛, ես երբէք չը պէտք է մուտք դործէի Ռօսմէրսհօլմ»—Բէրէկկան հանդուրժում է այսպէս նկատել:

—«Օ՛, երբ ես մտածում եմ թէ լոռութեան մէջ ինչեր է կրել—այս բոլոր ահարկու բաները, որոնց նա հաւատում էր, իր հիւանդ ուղեղում կազմել և համադրել—Արդեօք այս մասին նա քեզ հետ երբէք չի խօսել, որով կարողանար գոնէ մի փոքրիկ նշոյլ նկատել»:

—«Ի՞նձ հետո: Դու կարծում ես դրանից յետոյ ես մի օր կը մնայի այստեղ»—պատասխանում է նենգամիտ Բէրէկկան:

—«Ո՛չ ոչ, ըստինքեան հասկանալի է: Օ՛, ինչպէս նա պէտք է կոռուած լինի, և միայնակ կոռւել, Բէրէկկա. յուսահատ և բոլորովին միայնակ: Եւ այնուհետև այս սոսկալի, բողոքող յաղթանակը ջրազաղի առուակում»:

Խոկ նախանձոտ և խորամանկ Բէրէկկան հարցնում է —«Իթէ Բէտէին յարութիւն առնէր, դու նորից քեզ ազատ և թեթև կը զգայիր»—երբ Ռօսմէրը այս հարցին դրական պատասխան է տալիս, այն ժամանակ նա շարունակում է—«Ի՞նչ գեղեցիկ էր, երբ մենք վերջալոյսին միասին սենեակն էինք նստում և միմեանց օգնում էինք մեր կեանքի նոր ծրագիրները մշակելու: Դու կամենում էիր մտնել իրական առօրեայ կեանքը և իրմէ մի աղատուած հիւր՝ ուղում էիր մի հօտից դէպի միւսը դիմել, մտքեր և ողիներ նոււածել. շուրջդ աղնուական մարդիկ ստեղծել, աղնուական մարդիկ»:

—«Ուրախ աղնուական մարդիկ»:

«Այս, ուրախ»:

Ցունիս, 1902.

—«Ուրովինետն ուրախութիւնն է, որ հոգիները ազնուացնում է, Թէրէկկա»:

—«Չես հաւատում, որ նաև վիշտը, մեծ վիշտը»:

—«Այն, եթէ միայն կարելի լինէր դրանից սթափուել»:

—«Հէնց այս է, որ դու պէտք է անես»:

Բայց ինչպէս Ռօսմէրը, առանց այն էլ, շարունակ լրջութեան ամպերով էր պատաճ՝ շատ քիչ էր ուրախ, որովինետն «Ռօսմէրսհօլմում փոքրիկ երեխաները երբէք չէին աղաղակում, իսկ երբ մեծանում էին՝ երբէք չէին ծիծաղում»—իսկ այժմ նրան ակամայ դեռ տանջում էր յանցապարտութեան զգացմունքը, կեանքի գեղեցկութեան և իսկական վայելքի կորիզը նա համարում էր Փալաղաղ եւ զուարք անմեղութիւնը, որ ներկայ հանգամանքներում իր համար բացակայում էր, իսկ Թէրէկկայի համար՝ դեռ աւելի:

Սակայն վերջինս ինքնազոււսպ կերպով՝ «անողորմ ուրախանների» ձնչումից աղատուելու համար առաջարկում է նրան «նոր յարաբերութիւններ» ստեղծել:

—«Նոր յարաբերութիւններ»—շուարած հարցնում է Ռօսմէր:

—«Այն, նոր յարաբերութիւններ դէպի քո լրջապատը: Սպրիր, շարժուիր, գործիր և շարունակ այստեղ նստած մի խորհիր անլուծելի առեղծուածի մասին»:

Սակայն Ռօսմէրը խնդրին ուրիշ կերպարանք է տալիս:

—«Քո կարծիքով մեր յարաբերութիւնը այսօրուանից ինչպէս պէտք է լինի»:

—«Ես հաւատացած եմ, որ ինչ էլ պատահելու լինի, մեր բարեկամութիւնը կարող է տեւական լինել»:

—«Իմ ասածը իսկապէս այդ չէր, այլ այն, ինչ որ մեզ երկուսիս սկզբից մօտեցրեց և սերտ կերպով միացրեց—մեր

—մեր ընդհանուր հաւատքը դէպի տղամարդու և կնոջ մաքուր կենացկութիւնը»:

—«Այն, այն, յետո՞յ»:

—«Ուզում եմ ասել՝ այսպիսի յարաբերութիւն ինչպիսին սերն է՝ աւելի յարմար չէր մի խաղաղ և բախտաւոր կեանքին»:

«Վշտատանջ յիշողութիւններից, տխուր անցեալից» աշատուելու համար՝ Ռօսմէրը միայն մի միջոցի մասին էր մտածում—այդ բոլորը փոխարինել «կենդանի իրականութեամբ»՝ այսինքն Բէատէի թողած դատարկ տեղը լրացնել. և այս լրացնողը պէտք է լինէր Թէրէկկան, որին և յայտնապէս դիմում է Ռօսմէրը՝ առաջարկելով դառնալ իր գերկորդ կինը»—«Ես չեմ կարող և չեմ կամենում մէջքիս վրայ մի դիակ կրելով՝ քաշ տալ

իմ գոյութիւնը։ Օղնիր ինձ, Ռէբէկլա, ազատուել այս դիակից—Սակայն որպիսի անակնկալ՝ Ռէբէկլան նրաժառում է, բացարձակապէս մերժում է նրա առաջարկը—«Այլ ես չը խօսես այդ մասին. ես երբէք չեմ կարող քեզ կին դառնալու; իսկ երբ Ռօսմէրը պնդում և աղաջում է—այս տարօրինակ կինը ահա թէ ինչ սպառնալիք է կարդում—«Այն ժամանակ ես կը գնամ այն ճանապարհով, որով Բէատէն գնաց։ Հասկացար այժմ, Ռօսմէր»։

Այսուել մենք արդէն կանգնած ենք դրամայի ամենահետաքրքիր հանգոյցի առաջ։ Չե որ Ռէբէկլայի ջերմագին իղձը հէնց այս էր. չէ որ նրա խորամանկ մեքենայութիւնների, արձարդի և անխիղճ թակարդների նպատակակէտը Ռօսմէրին որսան էր։ Այժմ որսը ինքնաբերաբար, կամովին գալիս է պատրաստուած ծուղակը, իսկ որսորդը հրաժարում է նրան նուաճել, ինչնո՞վ բացատրել այս խորհրդաւոր երեւոյթը։

Չը նայելով Ռէբէկլայի անզուսպ զգայականութեան և կրքոտ ցանկութեան՝ վերեւ առաջ բերուած հատուածներից արդէն երեւում է, որ նրա յարաբերութիւնը Ռօսմէրի հւամիանգամայն մաքուր է եղել, զուտ բարեկամական։ Երբ բէկտօր Քրօլը այս առիթով մութ ակնարկներ է անում։ Ռէբէկլան յուզուած և խորիմասա կերպով պատասխանում է—«Ես համարեա թէ պատրաստ էի ասել—կուզենայի, որ ձեր խօսքերը ճիշտ լինէին, պարոն Քրօլ»։

Սակայն Ռէբէկլան զրկում է ոչ միայն իր ցանկութիւններին յագուրդ տալուց, այլ և Բօրմէրսհօլմում նրա ներքին, հողեկան աշխարհը զգալի՛ կերպարանափոխութեան է ենթարկում։ Նա որ առաջ արիւնարբու կերպով, զիշատիչ գաղանի նման որսի գրգիռն էր միայն պաշտում—յանկարծ մեղմանում, մի քնքոյց աղաւնի է գառնում։ Երբ Ռօսմէրը նկատում է—«Երբէք չէ կարելի ձեռք բերել մի յաղթութիւն, որի հիմքը ոճրագործութեան մէջն է արմատացած»—թէեւ Ռէբէկլան սա համարում է «ժառանգական կասկած», «ժառանգական երկիւղ», «ժառանգական խղճի խայլոց», —այնուամենայնիւ զգում է, որ բաղդաւորութեան աղը, ուրախ և անվրդով անմեղութեան զիտակցութիւնը» պակասում է իրան։

«Բօւթերսհօլմը ինձ ընկենց, ամբողջովին խորտակեց»—ահա Ռէբէկլայի կարծ և ազդու խոստովանութիւնը, նա կորցրել էր իր կամքի ոյգը և թարմութիւնը, նա, որ առաջ ոչ մի տարրերութիւն չէր գնում չարի և բարի մէջ, որի գործունէութեան յենակէտը կոպիտ էզօֆիզն էր միայն, անզուսպ կերքը—այժմ ռուրիշ օրէնքներով է ղեկավարում։ իսկ ով էր այս ռուրիշ

օրէնքների» հեղինակը—Ռոսմէր, որ իր մեղմ և ազնիւ բնաւութեամբ Ծէրէկկային անդիտակցաբար կրթեց, հոգեպէս կերպարանափոխեց, —«Ռոսմէրեան ընտանիքի կամ աւելի ձիշչ՝ ու աշխարհայնացքն էր, որ իմ կամքը վարակեց»:

—«Վարակեց»—չոււարած հարցնում է Ռոսմէր:

—«Եւ հիւանդացրեց, ստրկացրեց այնպիսի օրէնքներով, որոնք առաջ ինձ համար զին չունէին Դու և քեզ հետ միամին ապրելը իմ հոգին ազնուացրին»:

—«Ա՛, եթէ ես միայն հաւատալ կարողանայի»:

—«Կարող ես հաստատ հաւատալ Ռոսմէրների աշխարհահայնացքը ազնուացնում է, բայց... բայց...»

—«Բայց, յետոյն»:

—«Բայց և սպանում է բաղդաւորութիւնը»:

Ծէրէկկայի բաղդաւորութեան դահիճը սակայն խղճի խայթը չէր իսկապէս: Բէտէի մահը նրա մէջ համարեա զղջման ոչ մի զգացմունք չառաջացրեց: Ծէրէկկայի խորին համոզմունքով այդ մահը անհրաժեշտ էր, որպէս զի Ռոսմէրը ներքուստ կերպարանափոխուէր, լայն հայեացքներ ձեռք բերէր— «Բանի Բէտէտէն կենդանի էր՝ դու երբէք իներդ դու չիր»: Բայց մի ուրիշ հանգամանք է նրան սարսափեցնում—«անմեղութեան բացակայութիւնը», որի մասին Ռոսմէրը դեռ անտեղեակ էր: Այս զգացմունքը Ծէրէկկայի համար կրկնակի ճնշող է դառնում, երբ նա յանկարծ բէկտօր Քրօլից տեղեկանում է իր կասկածելի անցեալի մասին, որ ինքը մի ապօրինի զաւակ է, հետեւապէս ժառանգաբար տրամադրուած դէպի այն յանցանքը, որի հեղինակն էր նա այժմ:

Այս կրկնակի հարուածի ազդեցութեան տակ նա վճռում է խոստովանել իր յանցանքը, բայց անել ջրաղացի առուակի զալանիքը, որի մթութիւնը դեռ տանջում էր Ռոսմէրին—«Դու անմեղ ես, ես եմ մեղաւորը,—ես—որ Բէտէտէն խելագարեցրի, և տուաջնորդեցի դէպի այն ճանապարհը, որ տարաւ դէպի ջրաղացի առուակը»:

Այս խոստովանութեան հետ միասին նա Ռոսմէրին և Քրօլին յայտնում է իր դիտաւորութիւնը և լարած մեղենայութիւնները՝ «Բայց դուք կարծում էք թէ ես սառն և ճանագէտ հաշիւներով էի գործում: Այս ժամանակ ես այն չէի, ինչ որ այժմ եմ: Եւ ինձ թւում է, որ մարդկանց մէջ գոյութիւն ունի երկու տեսակ կամք: Ես ուզում էի այսպէս թէ այնպէս Բէտէտէն հեռացնել, բայց չէի հաւատում թէ դա կարող է տեղի ունենալ: Ամեն քայլափոխին՝ երբ ես յափշտակուած յառաջ էի մղւում, կարծես մի բան ներքուստ աղաղակում էր—

այժմ բաւական է, այլ ևս ոչ մի քայլ։ Բայց և այնպէս ես անկարող էի բոլորովին ձեռնթափ լինելու ես պէտք է էլի մի փոքր առաջ գնայի։ յետոյ դարձեալ մի փոքր և միշտ նորից մի փոքր—և ահա պատահեց այն, ինչ որ պատահելու էր։ Այս եւ զանակով յաճախ տեղի են ունենում այս տեսակ դէպքեր։

Նա յայտնում է, որ ինքը լիովին պաշարուած էր մի «վայրենի և անզուսպ ցանկութեամբ»։ —«Ես կարծում էի այն ժամանակ թէ սրա անունը սէր է. բայց այդպէս չէր...»։ Սակայն նա չէ թագինում և իր հոգեկան շրջափոխութեան միւս ընթացքը—նա խոստովանում է թէ ինչպէս Ռօսմէրսհօլմի առանձնավայրում, միայնակութեան, մէջ ազգում է Ռօսմէրի մտքերից, քնարոյ և մեղմ տրամադրութիւնից—«այն ժամանակ տեղի ունեցաւ մեծ փոփոխութիւնը. միանգամայն դանդաղ, հասկանում ես. համարեա աննկատելի, բայց վերջը այնպիսի մի թափով—մինչեւ սրտիս խորերը... Եւ ահա բոլոր տգեղ, զգայնական ցանկութիւնները յետ մնացին, այնքան հեռու. բոլոր աղմկայող տարրերը ընկղմուեցին լուսութեան և հանգստութեան մէջ. հոգեկան մի խաղաղութիւն պաշարեց ինձ, խաղաղութիւն նման հիւսիսային կէսպիշերային արևին... Այսպիսով առաջացաւ իմ մէջ սէր, այն մեծ և հրաժարուող սէրը...»։

Եւ նա չէ դանդաղում Ռօսմէրին ցոյց տալ իր այդ սիրոյ մեծ գրաւականը—«գնալ այն ճանապարհով, որով Բէատէն էր գնացել»։

Երբ Ռօսմէր նկատում է Բէրէկիայի վճռողականութիւնը՝ ինքնարբաւական կերպով ասում է նրան.

—«Ես կը գամ քեզ հետօ։

—«Այն, մինչեւ կամուրջը. չէ՞ որ աւելի հեռուն գու չես համարձակուում»։

—«Դու նկատել ես»։

—«Այն. և զրա համար իմ սէրը դարձաւ անյօյս»։

—«Բէրէկիա, ահա ձեռքս գլխիդ դնելով՝ դարձնում եմ քեզ իմ իսկական կինը»։

—«Ճնորհակալ եմ, Ռօսմէր, ես այժմ գնում եմ ուրախ սրտով»։

—«Մարդ և կին պէտք է միասին գնան»։

Եւ նրանք միասին են գնում, որովհետեւ Ռօսմէր այդ ճանապարհը համարում էր ամիակը։

—«Բայց դեռ ասա ինձ էլի մի բան», հարցնում է Բէրէկիան, եղո՞ւ ես գնում ինձ հետ թէ ես քեզ հետօ։

«...Մենք հետեւում ենք իրար, Բէրէկիա. ես՝ քեզ և գու՝ ինձ»։

Այսպէս «երկուսը մէկ դարձած՝ համնում են մինչեւ կամուրջը, գրկախառնւում և վայր են զլորւում»

—«Հանգուցեալ տիկինը տարաւ երանց—մրմնջում է ականատես տիկին Հէլզէթ:

«Հանգուցեալ տիկինը թէտէն էր. իսկ նորապասկ զոյգի ողբերգախառն մահը՝ թէտէի վրէմն էր. Բայց մի վրէժ, որ տեղի է ունենում աղատ ինքնակամ կերպով, որովհետեւ Թօսմէրը՝ իրբեւ նոր աշխարհահայեցքի տէր՝ այն կարծիքի էր, թէ՝ իրանց վրայ ոչ մի դատաւոր չը կայ, այդ պատճառով իրանք պէտք է կատարեն արդարադատութիւնը»:

Իրերի դրութեան պարզուելուց և որոշ ընթացք ստանալուց յետոյ՝ Ռէբէկկայի և Թօսմէրի այս կիսարօմանտիքական մահը շատերին միանգամայն տարօրինակ է թւում։ Սակայն, մեր կարծիքով, դա մի ներքին անհրաժեշտութիւն էր. Այս տեսակ զոյգի միութիւնը ուրիշ կերպ անմտածելի էր, որովհետեւ անվրդով անմեղութեան» արեւը երբէք չէր կարող ծագել։ Մենք շատ հիմնաւոր ենք գանում իու Անդրէսս Սալօմէի այն սրամիտ նկատողութիւնը թէ այս մահը ներքուստ կատարուած մի պրօցէսի երեւոյթական արտացոլումն էր միայն»։

Գալով Թօսմէրի և Ռէբէկկայի բնաւորութեան՝ մենք գերադասեցինք այդ խիկան աղբիւրով և ըստ կարելոյն բազմակողմանի հատուածներով պարզել։ Առաջինը կամքով թոյլ, տատանուող, ենթարկուող, իսկ հոգով ազնիւ և լուսաւոր մըտքերի տէր է։ Այն ինչ երկրորդը կամքի հերոս է, բայց զգացմունքի (մենք «կիրքը» և «զգացմունքը» տարբերում ենք) թղուկ։

Այս զոյգի կենակցութեան հետեւանքն այն է լինում, որ երկուսն էլ փոխադարձարար ազդում են միմեանց վրայ, եւ ազդուողը, անշուշտ, աւելի Ռէբէկկան է—սա նշանաւոր է այն կողմից, որովհետեւ նա էր մտադիր ներչնչել Թօսմէրին և ոչ թէ ներչնչուել նրանից. Ռէկտոր Քրօլը շատ ճիշտ է նկատում Ռէբէկկայի մասին թէ նա ճենոր է բերել զանազան նոր մըտքեր և հայեացքներ. ծանօթ է գիտութեան տարբեր ճիւղերին, բայց այս բոլորը լոկ գիտելիք է մնացել, մարմին և արիւն չէ դարձել։ Սակայն Թօսմէրի ունեցած ազդեցութիւնից յետոյ այս խօսքերի նշանակութիւնը բաւական նսեմանում է։

Այս զոյգի բնաւորութեան ներհակ գծերից ուշագրութեան արժանի է այն, որ Ռէբէկկան իր ուժեղ կամքով ծառայում էր միայն իր «եսաւին. այն ինչ Թօսմէրի նպատակն էր շաղնուական մարդիկ» պատրաստել, ստեղծել գրադաւորաթիւն՝ ամենի համար եւ ամենին։ Ինչպէս «Ժողովրդի թշնամու» մէջ՝ այնպէս էլ այստեղ մենք տեսնում ենք ինդիվիդուա-

լիստ Իրսէնին նորից հասարակական իդէալների պրօպագանգայով ոգեւորուած։ Դոկտօր Շատօնմանի և Ռումէրի մէջ զարձեալ մի հեռաւոր զուգահեռազիծ կարելի է անցկացնել—այդ այն է, որ վերջինս չունենալով առաջինի կամքի ոյժը՝ աւելի շուտ է հիասթափւում թէ հասարակութեան ծառայելուց և թէ մանաւանդ ինքնավստանութիւնից։

Դրամայի միւս գէմքերից հետաքրքիր է Աւլրիկ Բրէնդէլ, որի բնաւորութիւնը մենք վերեւ մի փոքր արդէն ուրուագծել ենք։ Երիտասարդ հասակում նա էլ Գրէզէրսի նման մի ողեւորուած իդէալիստ էր. առանձնութեան վայելքների մէջն էր կառուցել իր իդէալների տաճարը, որը սակայն փշրուելու, հիմնայատակ կործանուելու էր իրականութեան անողոք ոյժի առաջ։

Սակայն Բրէնդէլի հիասթափութիւնը անհամեմատ աւելի ողբերգական է։ Գրէզէրս իր դառն փորձառութիւններից յետոյ կորցնում է իր հաւատքը դէպի «անուղղելի» մարդիկ և ոչ թէ առհասարակ դէպի իդէալը։ Նա թէեւ զոհւում է՝ այնուամենայնիւ դարձեալ մեռում է նոյն իդէալիստը։ Այս ինչ Բրէնդէլ հիմնովին կորցնում է իր հաւատքը դէպի իդէալը և դառնում է «զինսետան մի հանձար»—փոխանակ իր լուման ռազմատութեան սեղանին վրայ զոհելու՝ մութ պանդոկների անկիւններում իդէալիզմի մահերզն է կարգում։ Նա դառնում է մի «գահազուրկ թագաւոր իր հրդեհուած պալատի մոխիրների վրայ»։ և իրեւ «զիշերուայ փիլիսոփայ» նա այժմ միայն մի կարօտվ է վառւում—ձգտում դէպի ևմեծ ոչնչութիւնը։

Բրէնդէլ արդէն այս «ոչնչութեան» ձանապարհին էր երբ երկրորդ անգամ հանդիպելով Ռումէրին՝ խնդրում է «մի կամ երկու իդէալ փոխ տալ, մի քանի հսացած իդէալներ», որովհետեւ ինքը «բոլորովին մնանկացել էր»—«հէնց այն ժամանակ՝ երբ ես պատրաստում էի իմ առատութեան եղջիւրը դատարկել—մի սոսկալի զիւտ արի՝ տեսայ, որ բոլորովին մնանկ եմ... Քանին տարի չարունակ ծայրայեղ ազահութեամբ գանձարանիս փակուած դռների առաջ սպասում էի. իսկ երբ երէկ կամենում էի բաց անել և գանձը վերցնել՝ տեսայ որ ոչինչ չը կայ. ժամանակը իր սուր ժանիքով կրծել էր նոյն իսկ վերջին փոշին։ Դա մի սուենտ էր—ոչնչութիւն—և հին չքեղութեան հետքն անգամ չը կարու։

Այս սպանիչ հիասթափութիւնն է, որ նրան մի քանի գործնական իմաստութիւններ է ներչնչում—«Պէտէր Մօրտէնս գօրդ ապագայի տէրն է և զեկավարը ես դրանից աւելի մեծ դէմք չեմ տեսել Մօրտէնսգօրդը ամենակարողութեան ոյժ ու-

նի իր մէջ, նա անում է այն բոլորը, ինչ որ կամենում է։ Բայց ինչումն է կայանում այս ամենակարողութեան գաղտնիքը—«օրովհեան Մօրաէնսգօրզը երեք չե կամենում առվի բան թէ կարող ե»։ որովհետեւ նա ընդունակ է «ապրել կեանքը առանց իդէալների»։ Եւ սա է Բրէնդէլի կարծիքով գործելու և յաղթելու ամենամեծ գաղտնիքը, աշխարհային իմաստութիւնների գումարը։ Այս պատճառով նա խորհուրդ է տալիս իր նախկին աշակերտին՝ «օրինակ վերջնել իրանից և անհաստատ աւազի վրայ ամրոց չը կառուցանել»։

Բայց ինչ, միթէ իրսէն յուսահատուեց, միթէ յոսետեսութեան ամպերը նորից մթագնեցին նրա մտքի և զգացմունքի հորիզոնը—երբէք։ Ինչպէս Ռէքէկլան ոյժի շոայլութեան, յըդիացած կամքի գոհն է, այնպէս էլ Բրէնդէլ՝ յղփացած իդէալիզմի։ Ինչպէս նեղ եսականութեան վրայ հիմնուած ոյժը պէտք է խորտակուէք՝ նոյնպէս էլ եսականութեան վրայ հիմնուած իդէալիզմը պէտք է ջախջախուէք։ Իրսէն կրկին անգամ ամենաանինայ և կծու հեգնութեամբ ծալրում է այն հիւանդոտ և անգործնական իդէալիզմը, որ ըստ երեւոյթին թէն վերաբարձ է, բայց իր արմատներով կեանքից բոլորովին կտրուած և երեւան է գալիս միայն իրեւ ինքնարաւականութեան մի զէնք, անձնական օտարոտի վայելքների մի միջոց և որի ապօթէօզն է դառնալ «գինետան հանձար»։

Ոչ, Բրէնդէլի նման ռհանճարները» չեն իրսէնի իդէալը, այլ մարդկային սեռը ազնուացնելու տենչանքով վառուած Ռումէրները, որոնք սակայն անհամեմատ աւելի զրաւիչ կը լինէին։ Կթէ իրանց մաքուր զգացմունքներին և վեհ ձգառմներին միացնէին այն կախարդական ոյժը, որի անունն է՝ ապառած կամք։

## XIII

1888-ին, երբ տօնուում էր իրսէնի ծննդեան վաթսունամեայ յօրէլեանը՝ լոյս տեսաւ «Ծովի տիկինը» («Fruen fra Havnen»)։ Ինչպէս դրամայի վերնագիրը՝ նոյնպէս էլ բովանդակութիւնը բաւական խորհրդաւոր և միստիկական բնաւորութիւն է կրում։ Մենք մի անգամ ասիմ ունեցանք նկատելու թէ հիւսիսային բնութեան վեհութիւնը, յատկաւալէս այն տարերային զօրութիւնը, որ ներշնչում է ծովը՝ ուժեղ կերպով երեւան է գալիս սկանդինաւեան շատ գրողների մօտ։ Դա այն բնութիւնն է, որի գրկում մեծացողը անշուշտ պէտք է գունաւորուի նրա ազգեցութեան գրոշմով։ Թէ յամպի և թէ ծովի վրայ

նա այդ բնութեան անբաժան ընկերն է։ Նրանով մնուող և ողեւորուող, սակայն և նրա նէմ ըմբռստացող, մաքառող Բնութեան գրկիցն է ցայտում նրա օտարոտի, հուժկու ցնորքների և երազուն տրամադրութիւնների աղբեւը։ Սկանդինավիացու երեւակայութիւնը անեղո՞ւ ինչպէս իր առաջ սփոռուած կապուտակ սնսահմանութիւնը, կարօտի, «անծանօթի» զգացմունքը խոր և անյատակ՝ ինչպէս այդ անեղ տարրի մեծածաւալ հաւաքոյթը, իսկ տենչանքների, վառվուուն իղձերի թափը այնքան մրրկալից՝ ինչպէս նրա խռովայոյզ սաւանն ալեկոծող փոթորկիլը։

Իբսէն 1885-ին իր հայրենիքն այցելելիս՝ Մօլդէ կոչուած ծովեղերեայ ամարանոցումն էր, «Եորվէգական Նէապոլում», որ և նրան անշուշտ ուժեղ գրդումներ տուեց «Ծովի տիկինը» գրելու։ Սյստեղ մինք անմիջական կերպով տեսնում ենք բնութեան հզօր տարրերից մէկի՝ ծովի աղբեցութիւնը մարդկային հոգու վրայ, որ կարծես այդ տարրի հայելին դարձած՝ նրա նման ալեկոծւում, յուզեւում է, նրա նման փոթորկւում և դարձեալ խաղաղում է։

Դրաման, ինչպէս շուտով կը տեսնենք, իր սիմբոլիկական և միստիկական հիւսուածքի հետ միասին՝ բէալիստական բնաւորութիւն է կրում, ըստ էութեան ժամանակակից, կենսական խնդիրներ է միայն շօշափում։

Բժիշկ Վանդէլ իր կնոջ մահուանից յետոյ ամուսնանում է երկրորդ անգամ։ Էլլիդան՝ Վանդէլի երկրորդ կինը՝ ամուսնալիս թէն յայտնում է թէ՛ իր «միտքը մի ժամանակ ուրիշ տեղ էր»—այնուամենայնիւ բժիշկը այս բանին առանձին կարեւորութիւն չէ տալիս և զիրյանում է նրան։ Վանդէլի արածքայի գլխաւոր դրդիչը զգայական հաճոյքն էր, իսկ էլլիդայինը՝ կեանքի հոգուից աղատուելու ձգտումը։ Այս տեսակ պայմաններում հասկանալի է, որ վերջինս չէր կարող սերտ կերպով յարմարուել Վանդէլի ընտանիքին, որ բայց իր ամուսնուց բաղկացած էր առաջին կնոջից մնացած երկու աղջիկներից—Բօլէտոէ և Հիլդէ։ Մէկը արդէն հասունացած էր, իսկ միւսը գեռանչափահաս, բայց շատ կրակոտ և չարածճի։ Ահա թէ մեծաբերան Հիլդէն մի անգամ ինչ է ասում իր մօր մասին—«Մեր յարաբերութիւնները երբէք չեն կարող լաւ լինել. որովհետեւ նա բոլորովին չէ յարմարում մեզ, ոչ էլ մենք՝ նրան։ Աստուած գիտէ թէ ինչու հայրս նրան տուն է բերել։ Ես երբէք չէի զարմանայ, եթէ նա մի գեղեցիկ օր յանկարծ խելագարուէր»։ Նա իր քրոջ հետ խօսելիս իր խորի մօրը ուրիշ կերպ չէ անուանում, բայց եթէ «ծովի տիկինը»։ Այնքան սառն էր սրանց յա-

բարերութիւնը էլլիդայի հետ և առհասարակ այնքան դժուար էին նրանք ընտելանում սրան, որ իրանց հանգուցեալ մօր յիշատակովն էին ապրում. միշտ տօնում էին նրա ծննդեան տարեկարձը: Մինչեւ իսկ իրանց պարտէզում միմեանցից բաժանուած էին—այդուղ էլլիդան ունէր իր առանձին «օղատուն», իսկ ակջիշները իրանց յատուկ վերանդան:

Բժիշկ Վանդէլը սակայն լաւ է վերաբերում դէպի իր կինը և աշխատում է ամեն տեսակ յարմարութիւններ ստեղծել նրա համար, որովհետեւ նա չափազանց անհանգիստ էր և տառապում էր նեարդային մի տարօրինակ հիւանդութեամբ: Հինգվեց տարի էր արդէն նրանք ամուսնացել էին և էլլիդայի դըրութիւնը աւելի և աւելի կրթակական էր դասնում: Վանդէլը իրրեւ բժիշկ մտածում է մի լուրջ և արմատական դարմանի մասին: Նրան թւում է, որ էլլիդայի նեարդային լինելու պատճառը ընաանիքում նրա ունեցած խորթ զիրքն է—«Յեզ այնպէս է թւում թէ՝ իմ զաւակների մայրը դեռ կենդանի է. թէ նա աներեւոյթ կերպով ներկայ է մեր շրջանում: Դու կարծում ես թէ իմ հոգին բաժանուած է քո և նրա մէջ: Այս միաբն է, որ քեզ վրդովնեցնում է: Դու մեր յարաբերութեան մէջ ուղղակի մի անբարոյական բան ես տեսնում: Այդ պատճառով չես կարող, չես կամենում շարունակել ապրել ինձ հետ իրրեւ կին»:

Իսկ երբ էլլիդան նկատում է թէ՝ կայ «մի ուրիշ բան», որ իրան տանջում է—այն ժամանակ Վանդէլը միամտութեամբ շարունակում է—«Այս, այդ այն է, որ դու այստեղի շրջակաները չես կարող տանել: Ժայռերը ճնշում և ծանրացնում են քո հոգին: Այսաեղ բաւականաչափ պայծառ չէ. քեզ շրջապատճառ երկինքը այնքան լայնարձակ չէ. օդի հոսանքը այնքան լի և ուժեղ չէ»:

—«Դրանում դու կատարեկտպէս իրաւոնք ունես: Գիշեր և ցերեկ, ձմեռ և ամառ ես ծովի բուռն կարօտովն եմ տառապում»:

Եւ բժիշկը իր «խեղճ և հիւանդ երեխային» սփոփելու համար՝ վճռում է տեղափոխել նրան դէպի ազատ ծովը: Սա կայն իզուր, նա «մինչեւ խորը դեռ չէր թափանցել», էլլիդայի իսկական հիւանդութիւնը դեռ չէր հասկացել:

Սակայն ինչումն էր կայանում «ձովի տիկնոջ» հիւանդութիւնը:

Էլլիդան նոյնպէս «հիւսիսային բերքերից» էր ինչպէս թէրէկան, ծովեղրեայ մի վորքիկ քաղաքում՝ Սկիոլդվիկ նաւահանգստումն էր նա ծնուած, ուր իր հայրը փարոսի, լուսաշ-

տարակի կառավարիչն էր։ Մանկութիւնից ծովի ազատաշունչ օդն էր ծծել և փարոսի լուսավառ ճառագայթները դիտել Մի ծերունի պաստօր մինչեւ իսկ նրան համարում էր «հեթանոսուհի», որովհետեւ փոխանակ քրիստոնէական անուն կրելու մի նաւի անունով էր մկրտուել։

Ամուսնութիւնից եօթ տարի առաջ էլլիդան ծանօթանում է ամերիկական «Հանգու» նաւի պաշտօնեաններից մէկի հետ, որ իր ծագումով նոյնպէս «հիւսիսից» էր, բազզը նրան շատ մատաղ հասակից էր մղել դէպի ծովը և սրանով նա առիթ էր ունեցել մնեց ճանապարհորդութիւններ կատարել։ Այսպիսի մի անցորդ հանդիպելով էլլիդային շատ բնական է, որ բացառապէս ծովից պէտք է խօսէր նա պատմում է «փոթորկից և մրրկի խաղաղուելուց», ծովային թռւիսպ գիշերներից, նոյնպէս և պայծառ, արեւապարդ օրերից»։ Բայց նրանք խօսում էին նաեւ ծովային կենդանինների և թռչունների—կէտերի, դէլֆինների, ծովային չների, արծիւնների և ճայերի մասն։ Եւ էլլիդային թռւում էր թէ խօսողը այս ծովային կենդանիններին և թռչուններին ազգական է, երբեմն մինչեւ իսկ ինքն էլ իրան սրանց ազգակից էր զգում։

Այս օտարութի ճանապարհորդը, որին էլլիդան առաջին անգամ փարոսի վրայ հանդիպեց, վերջ ի վերջոյ համարեանշաննում է նրա հետ։ Բայց երկար չէ կարող մնալ այստեղ, որովհետեւ սպանում է իր նաւապեախն և այս պատճառով ստիպուած է շուտով հեռանալ—թէեւ շատերը կարծում էին թէ նա արդէն խեղդուած է։ Հեռանալուց առաջ նա ճանում է իր գրպանից բանալիքների մի օղակ և մատից՝ այն մատանին, որ նա շարունակ սովորութիւն ունէր կրելու։ յետոյ ինձանից էլ վերցնում է մի փոքրիկ մատանի և միասին անց է կացնում օղակի մէջ։ Սյնունետեւ զառնում է դէպի ինձ և ասում թէ՝ մինք երկուսս այժմ պէտք է ամուսնանանք ծովի հետ։ Այս խօսքերի հետ միասին նա մատանեզարդ օղակը ամբողջ ոյժով դէպի ծովի խորերն է ձգում։

Այս խորհրդաւոր հրաժեշտից յետոյ նա ճանապարհ է ընկնում դէպի հիւսիսային բեւեռը և Արխանգելսկից մի նամակ է գրում էլլիդային։ Վերջինս իր պատասխանում յայտնում է թէ իրանց յարաքերութեանը պէտք է բոլորովին վերջ տրուի և որ միմեանց փոխադաբար պէտք է մոռանան։ Զը նայելով այս հանգամանքին՝ նա շարունակում է գրել մի քանի անգամ աշխարհի զանազան ծայրերից՝ Զինաստանից, Կալիֆօրնիայից, Աւստրալիայից եւայլն—առանց սակայն էլլիդայից պատասխան ստանալու։ Այս նամակներում նա վճռականապէս

յայտնում է թէ կլիդան իրան է սպասելու և թէ ինքը գալու և նրան տանելու է:

Բժիշկ Վանգէլը երբ լսում է այս պատմութիւնը՝ չուարած նկատում է—«Այդ մարդը մի արտասովոր ոյժ է ունեցել քեզ վրայ»—«Այն, այն ահարկու մարդը»—վրայ է բերում կլիդան: Եւ հէնց այս ոյժն էր պատճառը, որ նա Վանգէլից առաջ մի սրբիք ուսուցիչ Արնհօրմի առաջարկը մերժել էր, որովհետեւ նա դեռ «ահարկու մարդու» թարմ տպաւորութեան տակն էր:

Եւ մինչդեռ Վանգէլը աշխատում է ամեն կերպ հանգըստացնել նրան՝ առարկելով թէ դա շատ հին դէպք է և որ ամեն ինչ «արդէն անցել է»՝ կլիդան պատասխանում է—«ոչ Վանգէլ, դա չէ անցել, և ես վախենում եմ, որ երբէք չի անցնի—երբէք կեանքում»:

—«Դրանով ուզում ես ասել թէ դու նրան քո սրտի խորերում անկարող ես մոռանալ»:

—«Ես նրան մոռացել էի, բայց յանկարծ այնպէս պատահեց՝ կարծես թէ նորից գալու է»:

—«Ի՞նչքան ժամանակ է»:

—«Մոտաւորապէս երեք տարի—կամ մի փոքր աւելի է—դա այն ժամանակն էր՝ երբ ես սպասում էի երեխային (խօսքը իր միակ որդու մասին է, որ ծնուելուց մի քանի ամիս յետոյ մեռնում է)»:

Կլիդայի նեարդային քայլայումը և հիւանդուտ մտազրադութիւնը այն աստիճանի է հասնում, որ նա «Օտարականին» յանկարծ կենդանի կերպով իր առաջն էր տեսնում—«Նա երբէք չէ նայում դէպի ինձ, բայց նա կանգնած է իմ կողքին».

—«Նրա տեսքը քեզ ինչպէս է թւում»:

—«Այնպէս ինչպէս ես նրան առաջին անգամն եմ տեսել... Ամենաորոշ կերպով ես տեսնում եմ նրա կրծքի կոճակը՝ բայց կապոյտ մարգարիտով: Մարգարիտը նման է մի մնուած ձկան աչքին, որ ուղղակի դէպի ինձ է յառած»:

—«Աստուած իմ, դու աւելի հիւանդ ես, քան թէ ես կարծում էի, աւելի հիւանդ՝ քան թէ ինքդ գիտես, ելլիդա»:

—«Այն, այն, օգնիր ինձ եթէ կարող ես, որովհետեւ զգում եմ, որ նա աւելի և աւելի է ինձ կաշկանդում»:

—«Եւ այդ վիճակի մէջ ամբողջ երեք տարի ապրել ես. ծածուկ վիշտ շարունակ քեզ հետ ես կրել՝ առանց ինձ յայտնելու»:

—«Բայց ես չեմ կարող... և եթէ բոլորը յայտնէի, ոլէոք է յայտնէի և անսասելին»:

— „Անասելին“:

— „Ոչ, ոչ, մի հարցնի, միայն մի բան և այլիս ոչինչ—ի՞նչպէս բացատրել երեխայի աչքերի առեղծուածը“:

— „Սիրելի կլինդա, հաւատացնում եմ, այդ բոլորը երեւակայութիւն է միայն: Երեխայի աչքերը ճիշտ այնպէս էին, ինչպէս ուրիշ նօրմալ երեխաներինը“:

— „Ոչ, նրա աչքերը այդպէս չէին—ինչպէս կարող էիր այդ չը նկատել—երեխայի աչքերը ծովի համեմատ փոփոխում էին իրանց գոյնը, եթէ փիորդը խաղաղ վիճակի մէջ էր՝ այդպէս էին և աչքերը. փոթորկի ժամանակ նոյնպէս...“:

— „Հըմ, գուցէ: Բայց եթէ անգամ այդպէս լինէր, յետոյ“:

— „Ես մի անգամ արդէն այդպիսի աչքեր տեսել եմ... երեխայի աչքերը Օտարականի աչքերն էին“:

— „Ելիդա“:

— „Եյժմ դու արդէն պիտի հասկանա՞՞ թէ ինչու ես չեմ կամենում և չը պէտք է ապրեմ քեզ հետ իրեւ քո ամուսին“:

— „Ելիդա, Ելիդա, իմ թշուառ, անբախտ Ելիդա“:

Բայց ամենահետաքրքիրն այն է, որ Ելիդան „Օտարականի“ այսպէս ասած՝ ոյժի վերահաստատութեան խորհրդաւոր րոպէին կատարելապէս տեղեակ էր: Ահա թէ ինչպէս:

Վանդէլի մօտ այցելութեան է գալիս մի թոքախտաւոր քանդակգործ՝ Լինգչտրանդ, որ ժամանակաւորապէս հեռացել էր Խտալիայից: Ծովային ճանապարհորդութեան հին թէ նոր տպաւորութիւններից նա մտածում էր մի մեծ երկ ստեղծագործել: Դա ներկայացնելու էր մի ծովագնացի կին, որ պառկած և տարօրինակ անհանգստութեամբ քնած է: Նա երազում է: Եւ Լինգչտրանդը հաւատացած էր այս վերջին մօմէնտը այնպիսի նրբութեամբ վերաբռնիւ, որ տեսնողը զգար թէ՝ յերաւի նա երազում է: Կնոջ կողքին դարձեալ մի պատկեր, որ ներկայացնելու էր նրա ամուսինը, որի բացակայութեան ժամանակ առաջինը անհաւատարիմ էր գտնուել և որը ճանապարհորդութեան ժամանակ ծովում խեղդուած էր: Բայց զարմանալին տյն է, որ նա այնուամենայնիւ յետ է գալիս. սակայն բոլորովին թրջուած՝ ճիշտ այնպէս, երբ մէկին ջրից դուրս են բերում—և գիշերային մթութեան մէջ իր կնոջ անկողնու մօտ կանգնած՝ դիտում է նրան:

Ելիդան այս բոլորը լարուած ուշադրութեամբ լսելով նկատում է—„Դա մի հրաշալի բան է“ և յետոյ աչքերը փա-

կած՝ շարունակում է — „ես տեսնում եմ այդ այնպէս կենդանի իմ առաջ“:

Լինգչարանդ իր ապագայ ստեղծագործութեան նիւթը մի իրական գէպքից էր վերցրել: Ճանապարհին՝ նաւի վրայ նա հանդիպում է մի ամերիկացի պաշտօնեայի, որ իր մեծաւորից՝ նաւապետից թերթերի մի կապոց է վերցնում և շարունակ քրքրում, որովհետեւ մտադիր էր նորվէգերէն սովորել: Մի երեկոյ՝ կատաղի փոթորկի ժամանակ, երբ բոլորը ահաբեկուած և հիւանդացած ներսն էին թափուել—ամերիկացին հանգիստ նստած՝ թերթերն էր շուռ տալիս: Եւ ահա յանկարձ, նա սոսկալի աղաղակ է բարձրացնում և բոլորովին այլայլում է. իսկոյն սկսում է թերթը կրծոտել և պատառ պատառ անել և մի փոքր յետոյ ինքնիրան խօսել—„ամուսնացած. մի ուրիշի հետ, երբ ես բացակայ էի“: Բայց այնուհետև մեզմ ձայնով շարունակում է — „Սակայն նա իմա է և իմը կը մնայ: Նա ինձ կը հետեւի, եթէ անգամ խեղողուած՝ ոև ջրից դուրս գամ և նրան տանիեմ:“

Այս պատմութիւնը էլլիդային սարսափեցնում է. նա ոչ մի կասկած չունէր, որ „ամերիկացին“ հէնց ինքը Օտարականն էր, իր նախկին նշանածը, որ նորվէգերէն թերթի յայտարարութիւնից տեղեկացել էր իր ամուսնութեան մասին: Այս բանում նա կատարելապէս արգէն համոզւում է, երբ յայտնուում է թէ Լինգչարանդի պատմած զէպքը տեղի է ունեցել երեք տարի առաջ: Ուրեմն հէնց այդ բոպէից էլ վերսկում է Օտարականի հիպնօտիկական ոյժը էլլիդայի վրայ:

Եւ ինչ, Օտարականը յիրաւի գալիս է անգլիական մի նաւով: Էլլիդան մի անհանդիստ նախազգայումով արգէն զգում էր այս: Աւազանի մօտ կանդնած նա անթարթ ջրին է նայում, երբ յանկարձ տեսնում է մի օտարականի՝ խիտ կարմիր մազերով և ճանապարհորդական շորերով, որ իրան „բարի երեկոյ“ է ասում:

— «Օ՛, թանկագինս, վերջապէս եկար»:

— «Այս, վերջապէս—պատասխանում է օտարականը:

— «Ո՞վ էք դուք, վիճակում էք այստեղ մէկին»—վախեցած և յանկարծակի եկած հարցնում է էլլիդան:

— «Այդ ի հարկէ քեզ հասկանալի պէտք է լինի»:

— «Այս ինչ է, ինչպէս էք խօսում ինձ հետ. ինչ էք ուզում»:

— «Ես միայն քեզ եմ ուզում»:

— „ԱՌ, աչքերը, աչքերը“—կիսախեղդ ձայնով մրմնջում է ելլիդան:

— „Վերջապէս ճանաչում ես ինձ. իսկ ես քեզ իսկոյն ճանաչեցի, ելլիդա“:

— „Աչքերը. այդպէս մի նայէք ինձ. օգնութիւն կը կանչեմ“:

— „Ճանդիսա, հանգիստ, մի վախենար. ես քեզ ոչինչ չեմ անի“:

— „Ասում եմ՝ այդպէս մի նայէք ինձ... ի՞նչ էք ուզում ինձանից“:

— „Ես խոստացել էի քեզ նորից գալ, երբ կարող կը լինէի“:

„Գնացէք, գնացէք և այլեւս մի վերադառնաք այստեղ: Զք որ ես ձեզ արդէն զրել էի, որ մենք այլեւս միմեանց հետ գործ չունենք“:

Բայց այս հանգամանքը, ինչպէս և ելլիդայի ամուսնացած լինելը Օտարականի համար նշանակութիւն չունէր: Նա այնուամենայնիւ եկել էր նրան տանելու:

Այդ միջոցին երեւում է բժիշկ Վանգէլը:

— „Ո՛, Վանգէլ, ազատիր ինձ, ազատիր ինձ, եթէ կարող ես: Եւ բժիշկը տեղեկանում է, որ պարոնը „Օտարականն է“, Վերջինս յայտնում է նրան թէ կլիդան իր նշանածն է եղել և խոստացել է սպասել իրան—և ահա այժմ եկել է տանելու:

— „Այդպիսի երախայական խաղերով երեւակայում էք որեւէ իրաւունք ունենալ“—նկատում է բժիշկը:

— „Ճիշտ է, իրաւունք՝ ձեր մտքով—ես, ի հարկէ, չունիմք“:

— „Ուրեմն էլ ինչ էք կամենում: Գուցէ մտածում էք նրան բռնի ինձանից խլել, իր կամքին հակառակ“:

— „Ո՛չ, դրանից ինչ օգուտ: Եթէ ելլիդան ուզում է ինձ հետ գալ, պէտք է ազատակամ կերպով գայ“:

— „Ազատակամ—աղաղակում է ելլիդան:

— „Եւ դուք հաւատում էք այդ բանին ինչպէս երեւում է դուք խելագար էք: Հեռացէք այստեղից. մենք այլեւս ձեզ հետ ոչ մի գործ չունենք“—ասում է Վանգէլ:

Օտարականը հեռանում է՝ յայտնելով, որ հետեւեալ օրը՝ գիշերը գալու է ելլիդայից վերջնական պատասխան ստանալու:

— „Ուրեմն էգուց“, — նկատում է ելլիդան:

— „Եւ այնուհետեւ երբէք“—վրայ է բերում բժիշկը:

— „Ո՛, Վանգէլ, պաշտպանիր ինձ իմ առաջ“:

— „Ելլիդա, ես զգում եմ, որ այս բոլորի յետեւը մի գաղտնիք կայ ծածկուած“:

— „Ինչ որ ինձ հրապուրում է—դա թագնուած է“:

— „Ի՞նչն է հրապուրում քեզ“:

— „Այդ մարդը մի ծով է“:

Վանդէլը էլլիդայի դրութիւնից յուսահատուած՝ դիմում է իրանց նախկին անսպին ուսուցիչ Սրնհօլմի օգնութեանը: Վերջինս սակայն նկատում է—„սիրելի բժիշկ, դուք ի պաշտօնէ ամեն ինչ պէտք է աւելի լաւ իմանաք“:

— „Ա՛խ, եթէ զիտենայիք, որքան դժուար է մի բժշկի համար ճիշտ գաղափար կազմել մի այնպիսի հիւանդի մասին, որին սրտանց սիրում է: Եւ այս էլ սովորական հիւանդութիւն չէ: ոչ սովորական բժիշկը և ոչ սովորական միջոցը կարող է օգնել... էլլիդան պատկանում է ծովային բնակիչներին. Խընդիրը սրանում է: Զեք նկատել, որ ծովային բնակիչները համարեա մի առանձին ժողովուրդ են կազմում: Կարծես թէ նըրանք էլ ծովի կեանքով են ապրում: Նըրանք էլ ունեն իրանց կոհակները—մակընթացութիւնը և տեղատութիւնը—թէ իրանց մտքերի և թէ զգացմունքների: Բացի դրանից, ոչ մի տեղում չեն կարող յարմարուել: Ա՛խ, այս բանը ես պէտք է առաջուց մտածէի: Մի կատարեալ յանցանք էր էլլիդային իր սովորական շրջապատից վերցնել և այստեղ տեղափոխել“:

Վանդէլը սրանով արտաքին կեղեն է միայն չօշափում, այն ինչ էլլիդան իր բացատրութիւնների մէջ աւելի խորն է թափանցում և վերջապէս գտնում է իր իսկական դիմուլը: Նա իր ամուսնութիւնը Վանդէլի հետ համարում է մի գժբախտութիւն՝ երկուսի համար էլ:—„Ճշմարտութիւնն այն է, որ դու եկար և ինձ գնեցիր“:

— „Քեզ գնեցի, քեզ գնեցի“—ապշած նկատում է բըժիշկը:

— „Օ՛, ես էլ մազաչափ անդամ քեզանից պակաս չէի: ես էլ ինձ վաճառեցի... Դու քո տան դատարկութիւնը երկար չէիր կարող տանել... ես էլ անօգնական էի և մենակ... Դու եկար և առաջարկեցիր ինձ կեանքի հոգսից աղատուել... բայց ես չը պէտք է բնդունէի: և ոչ մի գնով: ես ինձ չը պէտք է ծախէի: պէտք է գերադասէի ամենաթշուառ աշխատանքը, ամենառղորմելի դրութիւնը—միայն ազատ կամքով եւ սեփական ընտրութեամբ“:

Այնուհետեւ նա այն կարծիքն է յայտնում թէ իրանց կենակցութիւնը «չէ կարող ամուսնութիւն համարուել»:

— „Այս, այն կեանքը, որ մենք այժմ ենք վարում, ամուսնութիւն չէ—նկատում է Վանդէլը:

— „Թէ այս և թէ նախկին կեանքը—ոչ մէկը ամուսնութիւն չէ եղել... Առաջինը (Օտարականի հետ նշանուելը) սակայն կարող էր ամբողջական և մաքուր ամուսնութիւն դառնալ“:

Եւ Վանդէլը կարծում է թէ Էլլիդան սրանով բաժանման խօսք է ուզում բաց անել.—„Ապահարզան, դու ուզում ես մի օրինական ապահարզան ունենալ“:

— „Ա՛խ, սիրելիս, դու ինձ շատ քիչ ես հասկանում: Զեւականութիւններին ես բացարձակապէս ոչ մի նշանակութիւն չեմ տալիս, որովհետեւ զրանք բոլորը արտաքին բաներ են: Իմ ցանկութիւնն այն է, որ մենք երկուս համաձայնուենք ազատ կամքով միմեանցից բաժանուելու“:

Նա պահանջում է Վանդէլից ազատութիւն՝ Օտարականի ներկայութեամբ ընտրութիւն անելու:

— „Դու խօսում ես ընտրութիւնից. ընտրութիւն, Էլլիդա, այսպիսի մի գործում ընտրութիւն“:

— „Ընտրութիւն ես պէտք եւ ունենամ երկու կողմից. նա կամ պէտք է մենակ գնայ կամ ինձ հետ“:

— „Հասկանո՞ւմ ես թէ ինչ ես ասում: Նրա հետ գնալ, ամբողջ ճակատագիրդ նրա ձեռքը յանձնել“:

— „Բայց իմ ամբողջ ճակատագիրը միթէ չը դրի քո ձեռքը“:

— „Գուցէ. բայց նա, այն վայրենի օտարականը, մի մարդ, որից դու շատ քիչ բան գիտես“:

— „Բո մասին գուցէ աւելի քիչ գիտէի. այնուամենայնիւ հետեւցի քեզ“:

— „... Դու ոչ մի ընտրութիւն չունես, Էլլիդա: Դու չը պէտք է ընտրես. ես քեզ իրաւունք չեմ տայ ընտրելու“:

— „Ընտրութիւնը դու երբէք չես կարող արգելել. ոչ դու և ոչ մի ուրիշը: Դու կարող ես ինձ թոյլ չը տալ նրա հետ ճանապարհորդել, նրա հետ գնալ—եթէ միայն ես այս եմ ընտրում: Դու կարող ես ինձ բանութեամբ յետ պահել. կամքիս հակառակ—այս բոլորը դու կարող ես: Բայց որ ես եմ ընտրում—իմ սրախ խորքերում նրան եմ ընտրում և ոչ ենզ—երբ ես այսպէս եմ կամենում ընտրել և պէտք է ընտրեմ—սա դու անկարող ես արգելել“:

— „Ոչ, իրաւունք ունես. այդ ես չեմ կտրող արգելել“:

— „Բացի դրանից խափանող ոչինչ չը կայ. ես ոչ մի բանունիս, 1902.

նով կապուած, շղթայուած չեմ այստեղ։ Քո տանդ ես բոլորովին առանց արմատի եմ, Վանդէլ, երախաները ինձ չեն պատկանում։ Նրանց սիրտը իմո՞չ է։ և զրանց երբէք էլ ըստիրացայ...“

Վանդէլը խոստանում է հետեւեալ օրը չնորհել ելլիդային իր պահանջած ազատութիւնը, որպէսզի նա կարողանայ իր „սեփական կեանքով ապրել“։

— „Ա՛խ, Վանդէլ, Վանդէլ, դա շատ ուշ կըլինի“։

Խնչու.—որովհետեւ հէնց այդ օրը՝ գիշերը Օտարականը դալու էր։ Եւ ճիշտ նա գալիս է։

— „Պատրաստ ես ճանապարհորդելու, թէ չէ“—հարցնում է նա ելլիդային։

— „Տեսնում էք, որ նա պատրաստ չէ“—պատասխանում է Վանդէլը։

— „Ես ճանապարհորդական շորերի և ուրիշ զրանց նման բաների մասին չեմ հարցնում։ (Դառնալով գէսի ելլիդան)։ Ես հարցնում եմ քեզ՝ արդեօք պատրաստ ես ինձ հետեւելու—սեփական, աղատ կամքով հետեւելու“։

— „Ա՛խ, մի հարցնէք, ինձ այսպէս փորձութեան մի ենթարկէք“։

(Հեռուից լսում է նաւի զանգակի զօղանջիւնը)։

— „Ահա նաւահանգստում առաջին զանգը հնչեց։ Այժմ պէտք է այն, կամ ոչ ասես“։

— „Վճիռ, վճիռ ամբողջ կեանքի համար... Խնչու այդպէս անդրդուելի ինձ էք հետեւում“։

— „Միթէ ինձ նման գու էլ չես զգում, որ մենք երկուսս միմեանց ենք պատկանում“։

— „Կարծում էք այն խոստումի պատճառով“։

— „Խոստումները ոչ ոքի չեն կապում։ ոչ մարդու և ոչ կնոջ եթէ ես այսպէս անդրդուելի եմ քո վերաբերմամբ, զարանիցն է, որովհետեւ ես ուրիշ կերպ չեմ կարող“։

— „Խնչու աւելի շուտ չեկաք։ Ա՛խ—սա, որ քաշում, զրաւում է գէսի անծանօթը։ Ծովի ամբողջ ոյժը ամփոփուած է այս մէկի մէջ“։

— „Ես տեսնում եմ լսում եմ, ելլիդա, որ ես եմ, որին դու ընտրում ես“։

— „Իմ ամուսինը այստեղ ոչ մի ընտրութիւն չունի։ Ես եմ նրա համար թէ ընտրութիւն անելու և թէ նրան պաշտպանելու։ Այս, պաշտպանելու։ Եթէ դուք այստեղից չէք հեռանայ—մեր երկրից—առանց երբէք վերադառնալու, լաւ զիւ-

անք թէ ձեզ ինչ դրութեան էք ևսթարկում—բարկացած ընդմիջում է Վանգէլը:

— „Ոչ, ոչ Վանգէլ, այս չէ“:

— „Ի՞նչ էք ուզում ինձ անել“:

— „Ես ձեզ բանտարկել կըտամ իրրե մի ոճբագործի իսկոյն, քանի դուք դեռ նաւահանգիստ չեք հասել, որովհետեւ ես շատ լաւ տեղեակ եմ այն սպանութեան մասին, որ դուք դործել էք Սկիոլդվիկում“:

— „Դրա համար ես արդէն նախապատրաստուած էի. և այս պատճառով էլ (համում է դրաբանից ատրճանակը) հոգացել էի այս մասին“:

— „Ոչ, ոչ, նրան մի սպանէք, աւելի լաւ է ինձ“—աղաղակում է կլիֆան և վանգէլի առաջն է կանգնում կարծելով թէ Օտարականը նրան կըսպանէ:

— „Ոչ քեզ և ոչ նրան, Անհոգ կաց, սա սեփական գործածութեան համար է, որովհետեւ ես կամենում եմ իրրե աղատ մարդ ասլել և մեռնել“:

— „Վանգէլ, թող ինձ քեզ ասել—ասել, որ նա էլ լսէ: Այն, դու կարող ես ինձ այստեղ պահել. դու ունես զրա համար և ոյժը և միջոցը—և այսպէս էլ անելու ես: Բայց իմ միտքը և զգացմունքը, ինձ հրապուրող կարօտը և տենչանքները դու չես կարող կաշկանդել. նրանք կըձգտեն և կըսլանան հեռու, դէպի սնծանօթը, որի համար ես ստեղծուած էի և որը դու իմ առաջ փակեցիր“:

— „Ես տեսնում եմ, կլիֆա, դու քայլ առ քայլ սայթաքում ես: Ցանկութիւնը դէպի անհունը, անսահմանը—դէպի անհասանելին—մթագնեցնելու է քո հոգին“:

Բայց Վանգէլը մինչև այս աստիճան չէ հասցնում:

— „Քո փրկութեան համար ուրիշ միջոց չըկայ—ես գոնէ մի ուրիշը չեմ տեսնում—այս պատճառով... այս պատճառով մեր կապը լուծուած եմ համարում: Այժմ կատարեալ ազատութեամբ կարող ես ընտել քը նախապարհը“:

— „Ճիշտ է, ճիշտ. ինչ ես ասում: Ամբողջ սրտովդ դու այդպէս ես համոզուած“—հարցնում է շուարած կլիֆան:

— „Իմ ամբողջ, վշտալի սրտով“:

— „Եւ դու կարող ես, կարող ես այդ թոյլ տալ:“

— „Այն, ես կարող եմ. կարող եմ, որովհետեւ այնպէս ջերմադին քեզ սիրում եմ“:

— „Այսպէս մօտ, այսպէս սրտանց մօտ եմ եղել ես քեզ“:

— „Տարիների և մեր կենակցութեան հետեանքն է այս“:

— „Եւ ես, ես, որ այս բոլորը չեմ տեսել“:

— „Քո միտքը ուրիշ ճանապարհներ էր բռնել։ Բայց այժմ —այժմ դու սոլորովին ազատ ես թէ ինձանից և թէ այն ամենից, ինչ որ իմ է։ Այժմ կարող ես գանել կեանքիդ իսկական ճանապարհը։ որովհետեւ այժմ պէտք է ազատութեամբ ընթեռես և սեփական պատասխանաւութեամբ, էլլիդա“։

— „Ազատութեամբ և սեփական պատասխանաւութեամբ։ պատասխանաւութիւնն ոյնպէս Այստեղ է կայանում փոփոխութիւնը“—ապշած արտասանում է էլլիդա։

(Զանգակի ձայնը նորից է լսում)։

— „Լսում ես, էլլիդա, երկրորդ անգամն է հնչում. Եկ ուրեմն“—նկատում է Օտարականը։

— „Եյս դէպքից յետոյ ես այլս երբէք քեզ հետ չեմ գայ“—վճռողական շեշտով նկատում է էլլիդան։

— „Չես գայ... ուրեմն անցաւ“։

— „Եյն, անցաւ, ընդմիշտ“։

— „Ես տեսնում եմ՝ կայ այստեղ մի բան, որ աւելի ուժեղ է քան թէ իմ կամքը“։

— „Չեր կամքը այժմ այլսո ոչ մի նշանակութիւն չունի ինձ համար։ Իմ վերաբերմամբ դուք այժմ ծովից դուրս եկած մի մեռած մարդ էք, որը նորից դէպի ծովն է դառնում։ Ես այլ ես ձեզանից չեմ սարսափում և ինձ այլ ես ոչինչ չէ գրաւում“։

— „Մնաք բարով, տիկին Վանդէլ, Այսուհետեւ դուք ինձ համար ուրիշ բան չէք, բայց եթէ մի տանելի նաւարեկութիւն իմ կեանքում“—նկատում է Օտարականը և հեռանում։

— „Էլլիդա, քո հոգին ծովի է նման, ունի մակընթացութիւն և տեղաւութիւն։ Ժրտեղից եկաւ այս փոփոխութիւնը“—հարցնում է Վագնէլ։

— „Օ՛, միթէ չես կարող երեակայել, որ փոփոխութիւնը տեղի ունեցաւ և պէս և տեղի ունենար, երբ ես ազատութեամբ պէտք է ընտրէի“։

— „Եւ անծանօթը—դա քեզ այլ ևս չէ գրաւում“։

— „Դա ինձ ոչ գրաւում և ոչ ահարեկում է...“։

— „Ես սկսում եմ արդէն կամաց կամաց քեզ հասկանալ։ Դու մտածում և զգում ես պատկերներով ու երեսյթական մըտապատկերներով։ Քո կարօր եւ տենչաներ դեպի ծովի—ու հակումը դեպի նա, դեպի այն օտարականը—մէջդ արթնացած եւ անած ազատութեան ձգումի արտայայտութիւնն ե. և ուրիշ ոչինչ“։

— „Օ՛, ես չըգիտեմ, թէ ինչ պէտք ասեմ. բայց դու մի լաւ բժիշկ ես եղել ինձ համար։ Դու գտար իսկական միջոցը—

միակը, որ ինձ կարող էր օգնել—և համարձակուեցիր գործ գործ»:

— „Այն, ծայրայեղ կարիքի և վտանգի ժամանակ մենք, քիչիներս շատ ենք համարձակում... կը զառ նորից ինձ մօտ, ելլիդա»:

— „Այն, սիրելի, թանկագին վանդէլ, այժմ ես գալիս եմ քեզ մօտ. ես այժմ կարող եմ. որովհետեւ ես գալիս եմ ազատութեամբ—կամովին—և սեփական պատասխանատւութեամբ”:

— „Ելլիդա, ելլիդա, մտածել, որ մենք այժմ կարող ենք միասին և միմեանց համար ապրել...”:

— „Եւ ընդհանուր կեանքի յիշութիւններով—թէ քոնը և թէ իմը”:

— „Այն, իմ թանկադին”:

— „Եւ մեր երկու զաւակների համար, վանդէլ”:

— „Ասում ես.—մե՞ր”:

— „Նրանց համար, որոնց ես դեռ չեմ տիրացել և որոնք դեռ ինձ են պատկանելու”:

— „Մեր, օ, անարտայայտելի է իմ չնորհակալութիւնը այս խօսքի համար»:

Եւ երբ վանդէլ այս խօսքերից յետոյ ելլիդայի ձեռքը հրճուանքով համբուրում է—չարաձնի Հիլդէն, գործից անտեղիակ, ահա թէ ինչ է նկատում.՝ „Տեսէք, տեսէք, հայրիկը և նա կարծես նոր նշանուած լինեն”:

Միամիտ աղջիկը չը գիտէր, որ ըստ էութեան, լիրակի, նրանք նոր էին նշանուում:

Իր վերջին դրամաների մուայլ, պիսսիմիստական ընաւորութիւնից յետոյ իրաէն իր վաթսունամեաց հասակում յանկարծ այսպիսի լաւատես տրամադրութեամբ համակոււած մի դրամա է զրում: Այս դրամայով հեղինակը իր իրէալիզմի, ազատութեան և ծցմարտութեան պաշտամունքի կատարեալ յաղթանակն էր տօնում: „Ծովի տիկնոջ” մէջ մենք գտնում ենք նօրայի „զարմանալիի” մարմնայումը—իսկական ամուսնութեան և ընտանեկան բուն բաղդաւորութեան բովանդակութիւնը:

Դրամայի միւս հերոսներից ուշագրաւ են քանդակագործ կինգչտրամադը և Հիլդէն: Առաջինը մի հիւանդու և ինքնահաճ արուեստագէտ է, որ յանուն իր արուեստի պահանջում է ասմեն տեսակ զոհաբերութիւն և որ գլխաւորն է կանացի սէրը, որպէս զի սրանով գեղարուեստական պահանջը և ստեղռագործելու ձգտումը շարունակ իր մէջ վառ մնայ: Այս հե-

տաքրրիր թէմային, ինչպէս յետոյ կը տեսնենք, իբաէն դեռ առանձին դրամայ է նուիրում:

Զարանձնի Հիլդէն աչքերը գեռ նոր բաց արած, մի տն-փորձ Backfisch է, որ առանձին սէր ունի դէպի „զրաւիչը“, դէպի „հետաքրքրականը“: Այս խորհրդաւոր հակումի ամենասուր արտայայտութիւնն այն է, որ նա ձգտում է վայելել այրի-ութեան—և այն էլ հարսենական այրիութեան—բօմանտիզմը:

Մենք հետեւեալ անգամ, մի այլ դրամայում, նորից առիթ կ'ունենաք հանդիպելու Հիլդէն, երբ նա արդէն չափահաս կին է դարձել:

Վ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

(Կը շարունակուի)